




1153

٤٠٥٠٦







ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1884. ՄԱՐՏ

№ 1

ԼՈՒՑԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

	Երես.
1. Մանկավարժանոց և մանկավարժական ուսման անհրաժեշտ կարևորություն	1
2. Այդպիսի լուսուսումնական նպատակադրում	15
3. Գոյությունը դարգարելու, գոյությունից պատկերները և սուհասարակ աշակերանների ճաշակը դարգարելու մասին	30
4. Առաջ (լուսուսում)	47
5. Շարժական մասնադասարան	48
6. Իրախոսությունից փորձնական դաս Բեյլիանի դրու- րացում	51
7. Յիշատակարան	57
8. Մանուկները՝ հարկի 3 և 4 երեխաներում	

ԹԻՒՆԿԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՏԻՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1884

595



Дозволено ценз. Тифлисъ, 29 Марта 1884 г.
Типографія П. Мартиросіанца, Орб. ул. д. № 5.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԻՐ

Խմբագրանչիւր տեարը 2
Թերթ: Տարին 10 տեար:
Տարեկան գինը 3 ման.

Св. Эчмιάдинъ.
Редакция МАНКАВАРЖА-
НОЦЪ.

1887. ՄԱՐՏ

№ 1

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Faisons notre devoir, le (Մենք մեր պարտը կատարենք,
reste est vanité. մնացածն ունայնութիւն է:)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՈՒՍՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ:

Մանկավարժանոցիս — սէղագաօգիւումի նոյն ինքն ա-
նուեր ցոյց է տալիս իւր նպատակը. մանկավարժ-
ներ պատրաստելու տեղ, մանկավարժների դըպ-
րոց, école normale, Lehrer-Seminär, учительская
семинарія.

Մեր մէջ կան դպրոցներ, բայց այն, ինչ որ կագ-
մումէ դպրոցի հոգին և կեանքն, այսինքն ման-
կավարժօրէն ուսած և կրթված ուսուցիչներ, չու-
նինք, և ունենալու մասին ևս շատ սակաւ ենք
հոգում: Ո՛րքան անընական և անիմաստ է մեր
վարմունքը. մարմիններ — դպրոցներ — շինումենք,
բայց այն մարմիններին հոգի — մանկավարժ-ու-
սուցիչ — տալու մասին մենք չենք մտածում: Ապա
Թէ ոչ, որտեղ են մեր մանկավարժանոցները կամ

լինչպէս ասած են մինչև այսօր մեր մէջ, վարժապետանոցները: Եթէ մենք իմաստնաբար և իբրև նպատակ ունեցօղներ վարվելու լինէինք, մենք ամեն Թեմու մի մի մանկավարժանոց պիտի ունենայինք, որտեղ Հայ մանուկներին մարդավարի դաստիարակելու համար պիտի պատրաստվէին աշխատասէր, բանիմաց, մանկավարժ-ուսուցիչներ:

Յոյս կար, որ Բնդհանուր Հայ—Ուսուցչական Ժողովը կհոգար մեր հոգևոր դպրոցները այս կենսական խնդիրը և առաջին մանկավարժանոց հիմնելու պատրաստութիւն կտեսնէր: Բայց Ուսուցչական Ժողովը չժառանգեց անբաղդաբար առաջին մանկավարժանոց հիմնելու խնդիրը հոգալու և ի կատար ածելու փառքը: Մեր կարծեքով դպրոցական դործով գրաչող և դպրոցի նպատակը հասկացող իւրաքանչիւր Հայի մտածութեան և աշխատութեան նիւթ պիտի լինի այս խնդիրը: Այլպէս առանց մանկավարժօրէն պատրաստված ուսուցիչների անհնարին է մեր նոր սերունդի կրթութիւնը և դարգացումը: Թախանձելով առաջարկումենք մեր մտածող անսուտ Հայերին դիտել քաղաքակրթված եվրօպական ազգերի կեանքը և հնարաւոր օրինակ վերցնել նոցանից առաջ գնալու, մտի դառնալու համար: Յիշենք Զվիցէրայի, Բէլժիքի, Ֆրանսիայի մանկավարժանոցների քանակութիւնը և նոցա մէջ հայրենիքի անձնանուէր ծառայութեան համար իւրաքանչիւր տարի պատրաստվող ուսուցիչների թիւը: Զվիցէրան իւր երկու և կէս միլիօն ժողովրդով ունի 46 արական և իգական մանկավարժանոցներ ազ-

գային և մասնաւոր, և միայն ազգային մանկավարժանոցներում սովորում են 1420 ուսուցչացուներ և ուսուցչացուհիներ: Բէլժիքն իւր հինգ միլիոն ժողովրդով ունի 40 միայն արքունի (ազգային) մանկավարժանոցներ, (25 արական, 15 իգական), 2500 ուսանող ուսուցչացուներով և ուսուցչացուհիներով. Թէպէտ Թէ մին և Թէ միւս երկրի վարժարաններում սակիս չեն մանկավարժ-ուսուցիչներ: Բէլժիքի մասնաւոր, նոյն և կաթօլիկական մանկավարժանոցներ չենք հաշոււմ, որոնց քանակը և ուսանողները արքունականներին չափ գուցէ սլակ լինին: Իսկ մենք—երեք միլիոն Հայերս մեր ամեն տեսակ խառն և խուռն և անբարեկարգ դպրոցներով, չունենալով ամենևին մանկավարժօրէն ուսած և կրթված ուսուցիչներ (Թող չափազանց սակաւաթիւ բացառութիւններ), չենք մտածում, չենք հոգում հիմնել մի յատուկ մանկավարժանոց, առաւելապէս գոնէ գիւղական դպրոցների համար: Օր ու զիշեր այս մտքերով զբաղած լինելով, մենք ուխտել ենք, Թէ և մի մարդի ոյժերնց շատ վեր է, հոգալ և հիմնել առաջին հայկական մանկավարժանոցը, և հաւատում ենք, որ եթէ Տէրը բաշխում է մեզ դեռևս քանի մի օրեր այս կեանքում, միայն այս գործը կատարելու, մենք ևս կեանքի ուրիշ նպատակ չունինք: Մինչև այժմ հիմնած կլինէինք մեր ուխտած մանկավարժանոցը, բայց ցանկանում ենք յառաջագոյն հայկական դպրոցների վիճակի մասին մտածող և նախանձախնդիր անկեղծ Հայերի փոքր ինչ համակրութիւնը և քաջալերու-

Թիւնը դէպի այս բազմանշան գործը վաստակել:

Մանկավարժանոցի խնդիրը, մեր կարծիքով, առաւելագէտ մեր գիւղական դպրոցները «լինին թէ չլինին» խնդիր պիտի համարվի:

«Մանկավարժութիւն», «մանկավարժ», «մանկավարժական ուսումն և ուղղութիւն» բառերը այժմ մեր մէջ սմենքի բերան են. բայց անբաղդարար ասօղները լոկ բառեր են արատանում, խկապէս ոչ մանկավարժութիւն և ոչ մանկավարժական ուսումն և ուղղութիւն կան մեր ուսուցիչները համար: Ապա թէ ոչ, նոքա կլօտարէին գլխաւորապէս իրանց համար հրատարակվող մանկավարժական ամսագրերը կարդալ, շահել նոցա և շահվել նոցանից: Հանգուցեալ Վահան վարդ. Բաստամեանի հրատարակած օգտաւէտ յօդուածներով Դարոց ամսագիրը դադարեց բաժանորդ չունենալու պատճառով: Պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեանի հրատարակած Մանկավարժական Թերթ պատուական և օգտաւէտ ամսագիրը ստիպվեցաւ դատարել: Վարժարան նիւթաւէտ ամսագիրը ստիպվեցաւ դադարել, ստորագրողներ չունենալու պատճառով միայն: (Վարժարանը մարտ ամսուց կրկին սկսել է հրատարակվել): Մեր նորածին Մանկավարժանոցը նոյնպէս չունի բաժանորդներ, գոնէ մինչև այժմ, (մանաւանդ որ մենք սովորական միջոցներին չբիմեցինք. ոչ անդորրագրեր, ոչ բաժանորդական թերթեր ոչ ոքին ուղարկեցինք:) Գոնէ ուսուցիչներն իրանց պարտք համարէին չորդորել հոգաբարձութիւններ, որ իւրաքանչիւր դպրոցը մի օրինակ մանկավարժական թերթ ստանար, բայց

այս ևս չեն արած. շատ սակաւ դպրոցներն են ստանում մանկավարժական հրատարակութիւնները: Ստացողներից ևս ոմանք նուերարար են ստանում: Սա բաւական ապացոյց չէ արդե՞ք, որ մեր ուսուցիչներն անտարբեր են դէպի մանկավարժութիւն, կամ մանկավարժական ուսումն և ուղղութիւն:

Առովհետև մանկավարժական թերթի գործ է, եթէ ոչ վճուել ամենայն հնարով և ամենայն դէպքում մանկավարժական խնդիրները, գոնէ հրատարակ հանել և լուսարանել նոցա:

Բազմահոշակ և բազմահմուտ Տիէրը ասաց. „Chaque nation a les journaux qu'elle mérite“ — Խրաքանչիւր ազգն իրան արժանաւոր օրագիրներ ունի: Եւստ ու շատ արտուր և վշտայի գործ կլինէր, եթէ Տիէրի խօսքը ճշմարտվի մեր մէջ և մենք մանկավարժական գործ վարելու և մանկավարժական խնդիրներով զբաղելու արժանի չհամարվինք, չարհարանելով ոչ մի հրատարակութիւնը:

Եթէ մանկավարժութիւն ուսումնասիրողներ չկան մեր մէջ, խօսողներ անբաղդաբար շատ կան: Եւ որովհետև չկայ մի բան, որի մասին մարդիկ աւելի սիրէին խօսել քան թէ իրանց չլմացած գործի մասին, ուստի խրաքանչիւրը դատում է մանկավարժական խնդիրներ, երևան հանելով առաւելագէս ի հարկէ իւր ազխութիւնը: Օտարօտի երևութ է տեսնել, երբ ոչ ոք կվստահանար մի պատ շարել սկսել առանց որմնադիր լինելու, բնալուծական փորձեր անել առանց քե-

միկոս լինելու, վերաբիւ ձեւել առանց գերձակ լինելու, որ իւրաքանչիւրը յանկարծ մանկավարժ է դառնում, և քննում է այնքան բաղադրեալ, այնքան փափուկ արհեստ, որը կապլած է մի-
լենոյն ժամանակ գիտութեան վիթխարի ծառի բազմութիւ ճիւղերի հետ և որը կարօղ է ձեռք բերելի միայն բազմամեայ գիտօղութիւնները, ուսումնասիրութեան և փորձառութեան մի-
ջոցով:

Սակայն բանական կեանքը պահանջում է, որ արդարև ոչ միայն ուսուցիչները, այլ հասարակու-
թեան իւրաքանչիւր անգամը տեղեկութիւն ունե-
նայ մանուկներ վարժելու մասին: Օտարոտի և
անիմաստ երևոյթ է, որ կոչկալար կամ հացթուխ
լինելու, ոչխարներ և խոզեր արածեցնելու համար
անգամ հարկաւոր է համարվում մի տեսակ ուսումն,
վարժութիւն, պատրաստութիւն, իսկ հայր լինելու
համար, գաւակներ ունենալու համար ոչինչ ու-
սումն, ոչինչ պատրաստութիւն հարկաւոր չէ հա-
մարվում: Ուստի անբաղդարար մենք ընտանիք
կամ ընտանեկան կեանք չունինք ամենևին, որը
բաղաբախրթված աղբերի մէջ դպրոցի շափ առա-
ջադիմութեան և վերանորոգութեան միջոցներեց
մինն է: Միօղներ դարձօղները դոնէ իմանային ի-
րանց մանուկներին մեծացնել, իմանային, օրինակ,
առողջապահութեան այն կանոնները, որոնք կո-
րեւոր են այս փոքրիկ արարածների ֆիզիքական
բարօրութիւնը և առողջութիւնը պահպանելու հա-
մար: Բայց կան արդեօք հայագն ծնօղների մէջ
այս կերպով մտածօղներ և ներգործօղներ—մեզ

գոնէ անյայտ է: Եւ Հայկական կեանքը յանձնված է Հանգամանքին, բաղբի բերմունքին, և Հայացն մանուկը, եթէ շասենք իւր թէ մանկութեան և թէ աշակերտութեան ամբողջ ժամանակ, գոնէ մինչև դպրոց մտնելը, անուսէ իրբև մի բոյս անտառում... Ինչ աննէրելի թեթևամտութիւն, քնչ մոլորութիւն: Անկասկած կգայ ժամանակ, երբ այս մեր ներգործելու եղանակն իբր առասպել պատմելով, թէպէտ գուցէ բաւական հեռաւոր սերունդները կսկսեն դարմանալ մեր խորին տգիտութեան վերա, թէ լուսաւոր և քաղաքակիրթ 19-րդ դարում քնչպէս էինք վարում այսչափ խուարային և անկիրթ կեանքը, միևնոյն ժամանակ մեր բարոյական վերանորոգութեան մասին անբազար սրտոտափօսելով:

Մեր խօսքն ու առարկութիւնը կցանկայինք հաստատել մի մեծ մանկավարժի մտքերով և հայեացքով:

Կըթութեան արհեստն այն առանձին շատկութիւնն ունի, որ գրեթէ ամենքին ծանօթ և հասկանալի գործ է երևում, խկ ոմանց մինչև անգամ հեշտ գործ է երևում—և ոչնքան աւելի հասկանալի և հեշտ է երևում, որքան մարդս պակաս ծանօթ է նորա հեօ տեսականապէս կամ գործնականապէս: Գրեթէ ամենքը խոստովանումեն, որ կըթութիւնը համբերութիւն է պահանջում: Ոմանք կարծումեն թէ նորա համար պէտք են բնածին ընդունակութիւն և շնորհ, բայց շատ սակաւներ եկած են այն համոզման, թէ բացի համբերութենից, բնածին ընդունակութենից և շնորհից, ան-

շուշտ կարեւոր են նոյնպէս և մասնագիտական տեղեկութիւնները:

Բայց միթէ կայ կրթութեան կամ դաստիարակութեան առանձին գիտութիւն (science): Այս հարցին գրական կամ բացասական պատասխան տալ կարելի է միմիայն յառաջագոյն որոշելով թէ ինչ ենք հասկանում ընդհանրապէս գիտութիւն (մտկացութիւն) բառով: Եթէ այս բառին այն նշանակութիւնը կտանք, ինչ որ ունի նա ընդհանուր ժողովրդական գործածութեան մէջ, այն ժամանակ ամեն արուեստի ուսումը գիտութիւն կլինի, իսկ եթէ գիտութիւն բառով մենք կհասկանանք միւլենոյն առարկային կամ միասեռ առարկաներին վերաբերեալ այս կամ այն երևոյթները շատ թէ քիչ ամբողջ և կազմակերպված օրէնքները, սրարզ բան է, որ այս մտքով գիտութեան (մտկացութեան) առարկաները կարօղ են լինել միմիայն կամ բնութեան երևոյթները կամ մարդկային հոգու երևոյթները կամ վերջապէս մատեմատիկական յարաբերութիւնները և ձևերը, որոնք գոյութիւն ունին նոյնպէս մարդկային կամքից դուրս: Բայց ոչ քաղաքականութիւնը, ոչ բժշկականութիւնը, ոչ մանկավարժութիւնը կարօղ են գիտութիւններ կոչվել այս խիստ մտքով, այլ միայն արհեստներ, որոնց նպատակն է ոչ թէ մարդկային կամքից անկախ (եղած) բաների ուսումնասիրութիւնը, այլ փորձնական գործունէութիւնը — ապագան, և ոչ ներկան և ոչ անցեալը (անցեալը նոյնպէս կախումն չունի այլևս մարդիկ կամքից): Գիտութիւնը ուսումնասիրում է միայն

ինչ որ կայ կամ եղած է. իսկ արհեստը ձգտում է ստեղծել այն, ինչ որ դեռ ևս չկայ, և ապագայը մէջ է տեսնում իւր ստեղծման նպատակը և կատարելատիւրը: Ի հարկէ ամեն արհեստ կարող է իւր տեսութիւնը (տէօրիա) ունենալ, բայց արհեստի տեսութիւնը գիտութիւն չէ. տեսութիւնը չէ աւանդում արդէն եղած երևոյթների և յարաբերութիւնները օրէնքները, այլ կանոններ է աւանդում փորձնական գործունէութեան համար:

«Գիտութեան առաջարկներն (thèses), ասում է անգլիացի հեղինակ Ջոն-Ստիւարտ Միլը, հաստատում են միայն գոյութիւն ունեցող փաստերը. գոյութիւն, համագոյութիւն, հետևողութիւն, նմանութիւն (երևոյթներէ): Արհեստի առաջարկները (тезисы) չեն հաստատում թէ կայ որևիցէ բան, այլ ցոյց են տալիս այն, ինչ որ պիտի լինի:» Պարզ երևում է, որ այս մտքով ոչ քաղաքականութիւն, ոչ բժշկականութիւն, ոչ մանկավարժութիւն կարելի է գիտութիւններ անուանել: Արտիհետև նոքա չեն ուսումնասիրում այն, ինչ որ կայ, այլ միայն ցոյց են տալիս այն, ինչ որ ցանկալի էր տեսնել, որ լինէր, նոյնպէս և այն ցանկալի դրութեանը հասնելու միջոցները: Ուստի մանկավարժութեանը պէտք է ասել կրթութեան արհեստ և ոչ գիտութիւն:

Եթէ դաստիարակութեան նպատակն արդէն յայտնի է մեզ, դաստիարակութեան միջոցները որոշելու վերաբերմամբ գիտութիւնը կարող է մեծ էական օգնութիւն տալ դաստիարակութեանը: «Միայն ուսումնասիրելով բնութիւնը, ասում է Բէկօնը, կարող ենք յուսալ թէ նորան կկուտալա-

րենք և կստիպենք նորան մեր նպատակներին յարմար ներգործելու»:

Մանկավարժութիւնն իւր նպատակներին հասնելու համար իրան անհրաժեշտ կարևոր միջոցների տեղեկութիւններ է քաղում այն բոլոր գիտութիւններից, որոնք ուսումնասիրում են մարդի մարմնական կամ հոգեկան բնութիւնը և ուսումնասիրում են միևնոյն ժամանակ ոչ թէ ցնորական, այլ իրական երևոյթները: Մարդաբանական գիտութիւնների ընդարձակ շրջանին պատկանում են մարդի անդամագննութիւն, բնագննութիւն և ախտաբանութիւն (պատոլոգիա), հոգեբանութիւն, տրամաբանութիւն, լեզուաբանութիւն, աշխարհագրութիւն, որ ուսումնասիրում է երկիրն իբրև մարդի բնակարան, և մարդն իբրև երկրագնդի բնակիչ, վիճակագրութիւն, քաղաքական տնտեսութիւն և պատմութիւն ընդարձակ մտքով, այսինքն կրօնների պատմութիւն, քաղաքակրթութեան պատմութիւն, փիլիսոփայական սկստէմները պատմութիւն, զրականութիւնների պատմութիւն, գեղարհեստների պատմութիւն և յատկապէս մանկավարժութեան պատմութիւն: Բոլոր այս գիտութիւններն աւանդում են, համեմատում են և համախմբում են այն բոլոր փաստերը և փաստերի յարաբերութիւնները, որոնց մէջ երևան են զայլիս գաստիարակութեան նիւթի այսինքն մարդի յատկութիւնները:

Բայց մի թէ մենք կամենում ենք, կհարցնեն մեզ, որ մանկավարժն ուսումնասիրէր այսքան բազմաթիւ և այսքան ընդարձակ գիտութիւն-

ներ, նախքան կսկսէր ուսումնասիրել բուն մանկավարժութիւնը, իբրև մանկավարժական գործունէութեան կանոնների ժողովածու: Եթէ մանկավարժութիւնը կամենում է դաստիարակել մարդին ամեն կողմից, ուրեմն նա պիտի յառաջագոյն ճանաչէ նորան նոյնպէս ամեն կողմից: Ի հարկէ այսպիսի մանկավարժներ դեռ ևս չունինք և չենք կարօզ շուտ ունենալ: Մանկավարժութիւնը մեր մէջ նոր միայն յղանում է, իսկ շատ ազգերի մէջ նա դեռ մանկական դրութեան մէջ է գտնուում և նորա այսպիսի մանկութիւնը շատ հասկանալի է, որովհետև այն դիտութիւններից շատերը, որոնց օրէնքներից նա իւր կանոնները պիտի քաղէ, երանք նոր միայն իսկական գիտութիւններ դարձան և դեռևս ամենեւին հասած չեն իրանց կատարելագործութեանը: Բայց ոչ ապաքէն անդամադննութեան, բնալուծութեան, բնադննութեան և ախտաբանութեան անկատարելութիւնն արգելք չեղաւ նոցա բժշկական արհեստի համար: Հիմնական գիտութիւններ դառնալու:

Կարօզ են մեզ ասել, թէ այսքան գիտութիւններն անհնարին է մեզ ուրիշ տեղում ուսումնասիրել, եթէ ոչ համալսարաններում, ուստի կհարկաւորվի առանձին և ընդարձակ բաժին (Faculté) մանկավարժների համար: Եւ Քնչի պիտի չլինի մանկավարժական բաժին: Եթէ համալսարաններում կան բժշկական և մինչև անդամ տնտեսագիտական բաժիններ և մանկավարժական բաժիններ չկան, դա ցոյց է տալիս միայն, որ մարդս մինչև այժմ աւելի գին է դնում իւր մարմնի և

լիւր գրպանի առողջութեանը քան թէ իւր բարոյական առողջութեանը և աւելի հոգումէ տալագայ սերունդներէ հարստութեան մասին, քան թէ նոցա կանոնաւոր կրթութեան մասին: Աթէ մինչև այժմ պատրաստուած են տէխնօլօգներ, երկրագործներ, երկրաչափներ, խարտորագետներ, բրժիշկներ, տնտեսագէտներ, լեզուաբաններ, մատենատիպոսներ, և չէին պատրաստուած մանկավարժներ կամ դաստիարակներ, ուրեմն ոչ ոք սխալ գարմանայ, որ մեր կրթութեան գործը շատ վատ է դնում և ժամանակակից հասարակութեան բարոյական դրութիւնն ամենեւին չէ համապատասխանում կեանքի պահանջներին և նորա գործունէութեան միւս ճիւղերին:

Մանկավարժական բաժնի նպատակը մինչև անգամ ուրիշ բաժիններէ նպատակից աւելի որոշ կարօղ էր լինել: Այս նպատակը կլինէր մարդի ուսումնասիրութիւնը նորա բնութեան ամեն երեւոյթներէ կողմից: Այսպիսի մանկավարժական կամ մարդաբանական բաժնի գործնական նշանակութիւնը շատ մեծ կլինէր: Մանկավարժները թուով աւելի պէտք են քան թէ բժիշկները, և եթէ բրժիշկներին մենք յանձնում ենք մեր առողջութիւնը, մանկավարժներին կամ դաստիարակներին մենք յանձնում ենք մեր մանուկների բարոյականութիւնը և խելքը, յանձնում ենք նոցա հոգի և սորա հետ միասին մեր ազգի ապագան: Մեզ մինչև այժմ մաշում են բարոյական և ֆիզիքական դանազան տանջանքներ, արտեր, վնասակար մոլորութիւններ և սոցա նման բազմաթիւ չարիք:

ներ, որոնցից անկասկած կարօղ էր մեզ փրկել միայն լաւ կրթութիւնը: Բացի սորանից հասնող վաճակէնք, որ կրթութիւնը կատարելագործիլելով, կարօղ է շատ ընդարձակել մարդկային ֆիզիքական, մտաւորական և բարոյական ոյժերի սահմանները: Այլ հնարաւորութիւնը պարզ ցոյց են տալիս թէ բնագոյնութիւնը և թէ հողերանութիւնը:

Այստեղ կարելի է ընթերցողը դարձեալ տարուհուսումէ, թէ կարելի էր արդե՞ք կրթութենից հասարակական բարոյականութեան էական իրոյժութիւններ սպասել: Մթթէ չենք տեսնում օրինակներ, որ գեղեցիկ կրթութիւնը յաճախ ամենատխուր հետևանքներ է ունեցել:

Մթթէ չենք տեսնում, որ օրինակելի մանկավարժները ձեռնից երբեմն ամենալաւ մարդիկ էին դուրս գալիս: Մթթէ Նէրօնի դաստիարակը Սէնէկայն չէր: Այո, բայց ո՞վ ասաց մեզ թէ այն կրթութիւնն արդարև լաւ էր և թէ այն դաստիարակներն արդարև լաւ դաստիարակներ էին: Իսկ Սէնէկայն վերաբերմամբ տեսլու է, որ եթէ նա չէ գտած իւր աւելորդարանութիւնը և կարողացած է Նէրօնին նոյն բարոյական առածները, որ թողեց նա ի վայելս յետագայ սերունդի, մենք կարօղ ենք ուղղակի ասել, որ նոյնինքն Սէնէկան եղած է իւր սարսափելի աշակերտի գարհուրելի բարոյական սպախանութեան գլխաւոր պատճառներէց մին: Այսպիսի առածներով կարելի է սպանել մանուկը մէջ, մտնաւանդ եթէ նա կենդանի բնութիւն ունի, բարոյական զգացումն զարգացնելու ամենայն հնարաւորութիւն, և սոյսալիսի

սխալը հեշտ կարօղ է անել բնութեան հետ ան-
ժանօթ դաստիարակը:

Կրկնումենք, ոչինչ չէ կարօղ խլել մեզանց
այն հաստատուն հաւատը, թէ կգայ ժամանակ,
թէպէտ գուցէ և ոչ շուտ, երբ մեր սերունդները
կսկսեն զարմանալով լիչել թէ նրքան երկար ար-
համարհումէինք մենք կրթութեան դործը և թէ
նրչափ չարչարանքներ կրեցինք այս անհոգութե-
նից: Սակայն մանուկներն կրթութեան սուրբ
գործն սկսելով, մենք պիտի քաջ իմանանք, որ մեր
սեփական կրթութիւնը բոլորովին անգոհացուցիչ
է եղել և նորա հետեանքներն ընդհանրապէս տը-
խուր և թշուառ են, և թէ մենք պիտի ամեն մի-
ջոցներ գտնենք մեր մանուկներին մեզանց առա-
ւել լաւ մարդիկ դարձնելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ.

Nous ne voulons pas faire de vous des ma-
chines à enseigner.

(Մենք չենք կամենում ձեզանց ուսուցանօղ
մեքենաներ շինել): (Ժողովրդական դպրոցի
ուսուցիչներէ մասին): Բէ-լու-ն

Ֆրանս-գերմանական պատերազմից յետոյ ան-
հեռատես մարդիկ սկսեցին Ֆրանսիային նայել
լորև ոյժից բոլորովին ընկած ազգին և նորան
Իսպանիայի և Պօլօնիայի վիճակն էին գուշակում:
Վերջին 10—12 տարվան դպրոցական գործու-

նկույթները ցոյց տուեց թէ Ֆրանսիայի մէջ ուրքան կենսական ոյժեր կան: Ֆրանսացիներն ստրկաբար ոչ ոքին կամեցան նմանել, այլ ինքնուրոյնաբար մտածելով և աշխատելով նորոգեցին իրանց կեանքը դպրոցով: Նախ ընդարձակեցին ուսուցչի զարգացման հօրեզօնը, ապահովացրին նորա նիւթական գրութիւնը, ազատեցին այս և այն անձներն կախումից, միայն օրէնքն կախման տակ դնելով նորան և իրաւունք տուին նորան իւր դատաւանդութեան եղանակները բարւոքելու:

Այս են Ֆրանսացիների դպրոցական գլխաւորագոյն բարենորոգութիւնները:

I

Ֆրանսիայի բոլոր դպրոցներն երկու կարգ են բաժանվում. հասարակական և մասնաւոր, որոնք ստորաբաժանվում են աշխարհական և հոգևոր դպրոցներին:

Հետաքրքիր է այս դպրոցների համեմատութիւնը:

1880 թ. ազգ. նախարարութեան կողմից հրատարակված «Statistique de l'enseignement primaire» գրքի մէջ այս թուերն են նշանակված.

1876—77 թ. աշխ. դպրոցներ 51,657, աշակ. 2,648,562, ուսուցիչներ—64,025 էին:

Նոյն թ. հոգևոր դպրոցներ 19,890, աշակ. 2,068,373, ուսուցիչներ—46,684 էին:

1879 թ. Բարօղէն առաջարկեց ազգային ժողովին ազգային սկզբնական լուսաւորութեան նոր օրինակիծը, որի երեք հիմնական և անբաժանելի

պայժաններն են. պարտաւորական, անվարձ և աշխարհական լինելը: Նոր օրէնքով ամենքը պարտաւոր են ուսումն առնել. բոլոր մանուկները վեց տարեկան հասակից մինչև 13 տարեկան հասակը պիտի յաճախեն դպրոց: Կարօղ են ազատվել դըպրոց յաճախելուց, եթէ վերջին տարին կներկայացնեն ուսման վկայականը—certificat d'études: Առտնին ուսումն ստացողները պարտաւոր են քննութեան ենթարկվել: Օրինազանց ծնողները կամ նոցա փոխարինողները ենթարկվում են պատժին—հրապարակական յանդիմանութեանը քաղաքային վարչութեան մէջ տախտակի վերա արձանագրելով իւր ազգանունը, և դրամական տուգանքին:

500 բնակիչներով Իւրաքանչիւր համայնքը պիտի ունենայ մի արական և մի իգական դպրոց, կամ խառն դպրոց տղաների և օրիորդների համար միասին: Մանկական դպրոցները, խառն դպրոցները և բոլոր օրիորդական դպրոցները կանայք պիտի կառավարեն: Արական դպրոցում կենը կարօղ է լինել տղամարդ—ուսուցչի օգնական, եթէ նորա ազգական է, ապա թէ ոչ, կենը չէ կարօղ պաշտօն ունենալ արական դպրոցում:

Իւրաքանչիւր նահանգն ուսուցիչներ պատրաստելու համար պիտի ունենայ մի արական և մի իգական մանկավարժանոց (école normale) սիլզբնական դպրոցով: Մանկավարժանոցների վերատեսուչներ և վերատեսչուհիներ պատրաստելու համար զանազան քաղաքներում մասնագիտական դասընթացներ պիտի օահմանվին: Իւրաքանչիւր ուսումնական շրջանի (académie) մի մանկավարժանո-

ցում սխախ բարձրագոյն մանկավարժանոց սահմանվի սկզբնական մանկավարժանոցների ուսուցիչներ և ուսուցչուհիներ արտորաստելու համար:

Իւրոցական գործը կառավարելու երկու հաստատութիւն կայ. մի ընտրողական բարձրագոյն խորհուրդ 39 գիտնական անդամներով: (Անդամներն ընտրվում են 6 տարով. ներկայ անդամների մէջ կան Բէրտէլ, Ժիւլ Սիմօն, Բէրտրան, Բրէալ, դը Վուլանժ, Վելլալիան, Հանգուցեալ, Լարուէ, Ֆրէմի և ուրիշ երեւելի գիտնական մանկավարժներ): Միւս հաստատութիւնն է կառավարչական յանձնաժողովը նախարարի նախագահութեամբ:

Նոր օրէնքով միջնակարգ դպրոցների երեք առաջին դասարաններում չեն աւանդվում հին լեզուներ, հետեւեալ երեք դասարաններում աւանդվում է միայն լատինական լեզուն, և վերջին երեք դասարաններում միայն աւանդվում են երկու հին լեզուներն ևս: Ասպարմանակ լեզուի ուսուցչական քայլ է կրօնական, Թրանսիլանի մէջ կրօնականի սխախ մը ջնջելու վերաբերմամբ: Ռեսուցչի Կարմանակարի սխախն ու ուսուցչի է 800-900 Փրանկ, հաստատված ուսուցչի ուսուցչի է 1000-1200 Փրանկ, Ռեսուցչի բարձրագոյն ուսուցչի է 2100 Փրանկ է տարեկան: Բայց իւրաքանչիւր բարձրագոյն ուսուցչի վարչականը տարիս է 300 Փրանկ աւելի ստանալու իրաւունքի պայման որ աշխատասէր ուսուցիչը կարող է հասնել բնակարանի հետ տարեկան 3000 Փրանկ ուսուցչու (1840 թ. ուսուցիչներին կէսը ստանում էր տարեկան հազիւ 500 Փրանկ իսկ աւելի սակաւ): Ռեսուց Փրանսիա

յում ուսուցիչը դառնում է անկախ անձն, իւր աշխատասիրութենից միայն կախումն ունենալով, և այս ու այն անձի բռնակալութեանը և կամակատարութեանն ենթարկված լինելուց ազատվելով: Այսպիսի ուսուցիչը միայն կարող է հասարակութեան բարոյական և մտաւորական հօրիգօներ ընդարձակել: Ուսուցիչներին չեն պատուիրում ընդարձակ և մանրամասն հրահանգներ և դասագրքեր ձեռնարկ ունենալ, այլ նոցա ասումեն, որ դպրոցի առաջադիմութիւնը կախված է ուսուցչի աշխատասիրութենից, ջերմեռանդութենից և բանիմացութենից: Ազգային լուսաւորութիւնը բարձրացնելու լաւագոյն միջոցը Գրանսիւսն համարեց ուսուցչի դրութիւնը բարձրացնել, նորան անկախութիւն և ինքնագործունէութիւն տալ:

1876 թ. Գրանսիւսյում կային 36,905,000 բնակիչներ, նոյն թուում մանուկներն էին (6 միջև 13 տարեկան դպրոցական հասակում) թուով 2,278,000 տղաներ և 2,224,000 օրիորդներ, (ըստը 4,502,000): Դպրոցները թիւն էր 71,547, սոցանից արական և խառն դպրոցներ 42,421, օրիորդական—29,126, 59,021 հասարակական էին և 12,526 մասնաւոր: Բոլոր դպրոցներում ուսուցիչները և ուսուցչուհիներն էին 110,700 անձն, սոցանից աշխարհական էին 64,020, հոգևոր—46,684: Բացի սորանից Գրանսիւսյում կան 4,147 դպրոցներ 4ից մինչև 6 տարեկան մանուկների համար, առաջ հոչվում էին salles d'asile (ապաստանարան), այժմ կոչվում են écoles enfantines (մանկական դպրոց): Մանուկները գալիս են դպրոց առաւօտեան 7—8 ժամին և մը-

նումեն դպրոցում մինչև երեկոյեան 6—7 ժամ, չունենոր ծնողներն միջոց տալով աշխատելու դաշտում կամ ուրիշ տեղ:

Այլև կան դասընթացներ Հասակաւոր անձների համար: 1877 թ. տղամարդիկների համար կային 22,000 և կանանց համար 5,284 դասընթացներ, 560,000 աշակերտներով և 105,000 աշակերտուհիներով: Սոցանից բոլորովին անգլագէտ էին դասընթացների այցելութիւն սխսելու միջոցին 8000 տղամարդիկ և 22,000 կանայք:

Ազգային լուսաւորութեան բոլոր ծախսերը տէրութիւնն է անում: Այժմ ծախսերը գրեթէ ասանաբաստիկի են համեմատելով 40 տարի առաջ (1840 թ.) եղած ծախսերի հետ: 1840 թ. ազգային լուսաւորութեան ծախսերն էին 9 միլիոն Փրանկ, 1863 թ.—32 միլիոն, 1872 թ.—56 միլիոն, 1877 թ.—71 միլիոն:

Միայն Փարիզը ծախսում էր նախ քան 1870 թ. տարին 6 միլիոն Փրանկ, 1872 թ.—9 միլիոն, իսկ այժմ Փարիզը ծախսում է դպրոցների վերատարին 20 միլիոն Փրանկ:

II

Ժողովրդական դպրոցի արօգրամն այս է. բարձրական և քաղաքացիական ուսումն: Ընթերցանութիւն և գրութիւն: Լեզու և Փրանսական գրականութեան սկզբունք: Աշխարհագրութիւն, առաւելապէս Փրանսիայի: Պատմութիւն, առաւելապէս Փրանսական, մինչև մեր օրերը: Քանի մը օգտաւէտ տեղեկութիւններ իրաւասութեանից և քաղա-

քական տնտեսութենից: Բնական, Փիզիքական
և մատեմատիկական գիտութիւններ սկզբունք-
նոցա յարմարումն երկրագործութեան, ստողա-
պահութեան և ձեռնարուեստներին: Սկարչու-
թիւն: Արտաշտութիւն: Մարմնամարզութիւն: Ձի-
նորական վարժութիւններ տղաների համար և
ձեռագործութիւն օրիորդների համար: Վերին ժո-
ղովրդական դպրոցները պիտի ընդարձակեն սոցի-
ալաբանները, աշխարհայեցող մի նոր լեզու, որը վա-
րելի է մուսանել սկզբնական դպրոցներէ մէջ և ս-
կստեն ուսանելի առարկաների թուում չէ, առան-
ձին աւանգալիցով ծնողների ցանկութեամբ: Արտի-
փոխանակ աւանգալում է բարոյական և քաղա-
քացիական ուսումն (instruction morale et civique):
Շատ նշանաւոր է նոյնպէս քաղաքական տնտեսու-
թեան աւանդումն: Բարոյական տնտեսութեան
խնդիրներն այժմ միայն գիտնականներին չեն
գրադեցնում, այլև ժողովրդին: Ուստի ստողա-
միտ տնտեսական տեղեկութիւններ տարածելը ժո-
ղովրդի մէջ անհրաժեշտ կարեւոր է համարվում:
(Շատ օգուտ կարելի է քաղել Գուբոյ Կոմպէէրէէի
«Eléments d'éducation civique et morale» G. Com-
payré, 1881. Paris, և Ամբրուազ Ռանդիւի «L'écono-
mie politique à l'école primaire, petit manuel pra-
tique»—Ambroise Rendu. 1880. Paris—գրքերից):
Ամենայն ուսուցիչ շատ կարեւոր տեղեկութիւններ
կտանայ Վիէլ Լամարի (Viel Lamare) «Les jendis
de Villepreux» (Վիլպրեօսի հինգչորսութեան) հե-
ղինակութենից: (Սա տպւած էր 1870 թ. Revue
Pédagogique ամսագրում):

... Կոմիտաս ժամեցաւ ինչպէս զմի քան զմի
... Իսթամբուլից Իմ Կոմիտաս ժամեցաւ
... Կոմիտաս ժամեցաւ ինչպէս զմի քան զմի

Պրօֆեսորը որպէս արար կատարվելու վերաբեր-
մամբ ուրիշ անգամ կհանդիպենք, երբ Փարիզի
ամեն տեսակ բազմաթիւ դպրոցներում դասերին
և Տելլըրի մէջ քննութիւններին ներկայ գտնվե-
լով ժողոված անձնական նկատողութիւններս և
ուսումնասիրութեան հետեանք կստամբմ Սյժմ
քանի մի խօսք մնայն կասեմ: Եւ այս անգամայս լսել

Փարիզի դպրոցները վերատեսուէչ ա. Կարիօ (Car-
riot), և ընդհանրապէս դպրոցները տեսուչներ և
վերատեսուչներ, մանկավարժանոցները վերատե-
սուէչ և վերատեսուչներն իրանց բնական ֆրանսա-
կան պատրաստականութեամբ ամենայն միջոցնե-
րն են տալիս կարեւոր տեղեկութիւններ ձեռք
բերելու Նոյնպէս վարվեցան և Frères des écoles
chrétiennes (քրիստոնէական դպրոցները եղբայր-
ներ) անունով ուխտի վանահայրը և Նոյն ուխտի
անդամ Բէրնար Լիւիս, այս միաբանութեան դպր-
ոցներին այցելելիս: Կոմիտաս ժամեցաւ ինչպէս զմի քան զմի

Եղբայրներին իմ տեսած առաջին դպրոցն էր éta-
blissement de Saint Nicolas (rue Vaugirard, 22):
Դպրոցը կառավարվում է խորհրդով Փարիզի արք-
եպիսկոպոսի նախագահութեամբ և սովորեցնում
է տղաներին կրօն, բակաբնական դասումն և ա-
րուեստներ: Կոմիտաս ժամեցաւ ինչպէս զմի քան զմի

Դպրոցի պրօֆեսորն էր քաղաքական և կրօնական
ուսումն, ընթերցանութիւն, գրութիւն, պատմութե-
ան և աշխարհագրութեան սիցրուիք, ֆրանսա-

կան լեզուի և գրականութեան տարրեր, թուաբանութիւն, հանրահաշուի և երկրաչափութեան հիմնական տեղեկութիւններ, գծագրութիւն և նկարչութիւն, հաշուապահութիւն, բնագիտութիւն և բնալուծութեան սկզբնական տեղեկութիւններ, երգ և երաժշտութիւն, անգլիական և գերմանական լեզուներ, մարմնամարզութիւն:

Իպրոցն ունի շատ նշանաւոր արուեստանոց, որտեղ աշակերտներն Յ կամ Կ տարի են սովորում: Կայ պանսիօն, որտեղ ապրուստն արժէ ամիսը 32 Փրանկ, բացի 112 Փրանկից, որ առաջին ամիսը վճարելու է միանուագ: Իպրոցի ընդհանուր կըրթական բաժնում կան 800 աշակերտ, և արուեստանոցում—200 աշակերտ: Եղբայրները պարծենում են իրանց արուեստանոցներով:

Առաջին այցելութեան միջոցին աշակերտներն իրանց թատրօնումն էին. ընկերները թատրօն էին խաղում դպրոցի տարեդարձը տօնելով: Շատ քաղցր և սիրելի էին աշակերտների և ուսուցիչների հայրօրգիական յարաբերութիւնները: Աշակերտներն անկեղծ ուրախութեամբ մօտենում էին վերատեսչին և ողջունում էին նորան:

Երկրաչափութեան դասը գարմանալի խիստ սիստէմով և ընդարձակօրէն էր պատմւում: Բոլոր գլխաւոր աշխատութիւնը կատարւում է դասարանում. միևնոյն խնդիրը բազմաթիւ կողմերից է քննվում, կամ իբրև լօգիկական հետեւանք, կամ իբրև սրտմտական փաստ, կամ իբրև բազմաթիւ մասնաւոր խնդիրներ ընդհանրացնող առաջարկ: Նախ բացատրում է ուսուցիչը, յետոյ աշա-

կերտները, յետոյ կրկնութիւն, այնպէս որ աշակերտը դասից դուրս է բերում առաջարկիւած խընդրի պարզ հասկացողութիւն: Դասից դուրս աշակերտները միշտ շատ սակաւ գործ ունին:

Միւսնոյն յաջող եղանակով է աւանդում թուարանութիւնը: Ձարմանալի յարմարութեամբ են յօրինուած Փրանսական խնդիրների ժողովածուները: Խնդիրները խառն կերպով չեն գետեղուած, որը դժուարացնում է սովորաբար ուսուցչի պարագմունքը, այլ Փրանսական ժողովածուների մէջ խրաքանչիւր խնդիրն առանձին հարցին է վերաբերւում:

Առանձին ուշք են դարձնում Փրանսական լեզուի ուսման, որ երեք համակեդրօնական դասընթաց ունի: Տարրական դասընթացն աւանդում է ոչ թէ նախադասութիւն ինչպէս մեր մէջ, այլ բանի մասներ, միջին դասընթացն աւանդում է բառերի փոփոխմունք (հոլովմունք և խոնարհմունք), բարձր դասընթացը սիստէմական քերականութիւն: Օրինակները քերականական լուծմունքի համար սուրբ գրքից են առնում:

Կրօնի դասը մտերմական անկեղծ խօսակցութեան ձև ունէր:

Մեքաբանական ուխտի դպրոցներում չկայ ոչ հընչական եղանակ, ոչ շարժական տառեր, ոչ խորանարդներ, ոչ թուերի մանրամասն ուսումնի ընթացանութիւնը աւանդում է այբբենարանի վերա, ինչպէս լինում է մեր հին հայկական դպրոցում:

Փրանսական մանկավարժներն առանձին ուշք չեն դարձնում ուսումն արագացնելու և պարզացնե-

լու նոր եղանակներին, և ոչ մի եղանակ առանձնապէս չեն յանձնարարում. իւրաքանչիւր դպրոցն իւր եղանակ կարող է ունենալ: Ահա ինչ է ասում Բապէ ընթերցանութիւն ուսուցանելու մասին (Cours d'études des écoles primaires, publié sous les auspices de M. le ministre de l'instr. publ. par Rapet, inspec. génér de l'instr. publ. Paris, 1880 թ.— Եղանակի ընտրութիւնը յանձնվում է ուսուցչին: Անկարելի է հրահանգներ տալ դասեր կամ դասագրքեր յօրինելու մասին: Յանկալի է ուսուցչին երկն կատարեալ ազատութիւն տալ պարապմունքը կարգաւորելու, ուսանելի առարկաների և բոլոր դպրոցական կարգաւորութեան վերաբերմամբ): Դպրոցների սրօգրամը պահանջում է միայն, որ 6 ամսի ընթացքում ազատ կարգաւ իմանան աշակերտները: Յարե՛նարանց յետոյ, որով սովորում են Փարիզի բոլոր դպրոցներում, նաև Փարիզի մանկավարժանոցի վարժոցում, սկսում են կարգաւ գանալան ընթերցարաններ: Ընթերցանութեան իւրաքանչիւր դասը սերտվում է դպրոցում: Նախ աշակերտները կարդում են կապելով, յետոյ վանկերով, և ամբողջ բառեր ասելով:

Թուարանութեան դասաւանդութեան մէջ ոչ մի տեղ նկատելի չէ Գրուբէի գաղափարների ազդեցութիւնը, որոնք տարածված են Եվսուչէվսկու ձեռով ամբողջ Ռուսիայում և յետոյ մեր մէջ: Թուարանութիւն ուսումնասիրելիս գործ են դնում միաբանական դպրոցներում Premières notions d'arithmétique par F. P. B. et F. S. C. գրքի մէջ քաջատրված եղանակը: Դասարանական կարգա-

պահուցութեանը և անպայման լուծեանն առանձին ուշք չեն դարձնում: Բայց մեծ ուշք են դարձնում աշակերտները մաքրութեանը: Մեծ դասամիջոցից առաջ նայում են մաքուր են թէ ոչ աշակերտները ձեռները, կօշիկները, մազերը և մաքրութեան համեմատ տալիս են լիքքիկ տոմսեր, bien, très bien և այլն (լաւ, շատ լաւ) մակազրութեամբ: Նոյն տոմսերը տալիս են ամեն դասին աշակերտները պատասխաններից չետոյ: Սօթնեակում կամ մի ամսում այս տոմսերից աւելի ստացողը նստում է առաջին տեղ կամ մի նշան է ստանում կուրծքին կրելու չետագայ եօթնեակի կամ ամսի ընթացքում:

Իրական դասերն, լինչպէս որ նորա տւանդիւում են Գերմանիայում և հորան նմանելով Ռուսիայում, չլիան ամենեւին միաբանական դպրոցներում: Քրանսացի մանկավարժներն ասում են թէ իրական դասերը լաւ են միայն հինգամեայ կամ բթամիտ մանուկների համար: Ահա պ. Բիւիսօնի կարծիքը իրական դասերի մասին, որ յայտնեց նա Փարիզի մանկավարժական նիստերի մէջ: «Շատ կարելի է ուրիշ ազգերի մէջ իրական դասերն իրանց օգուտն ունին, բայց մեր մանուկները համար անսկէտք են: Նորա չեն կարող սովորեցնել ոչ դիտել, ոչ քննել, ոչ խօսել: Օրինակ, մի դաս աղանու մասին: Բերում են աղանին դասին— այս շատ լաւ է— և ցոյց են տալիս մանուկներին: Յետոյ ասել են տալիս. «Աղանին ունի գլուխ»: Կարելի է գերմանացի մանուկները մեծ վայելչութիւն են զգում այս ճշմարտութիւնը յայտնելու, իսկ մեր մէջ եթէ ուսուցիչն այսպէս խօսէր, մեր ա-

մենավորք մանուկներն անգամ կսխտէին մտածել թէ ուսուցիչը ծիծաղումէ նոցա վերա, և կը դարձնէին իրան: Մեր մանուկը աղանիսն տեսնելիս չի ասի. սա գլուխ ունի, ոտներ ունի, թւեր ունի, այլ կասէ. «Ընչ սիրուն գլուխ է, ընչ փոքրիկ թաթեր են, ընչ գեղեցիկ փետուրներ են և այլն: Պարոններ, մի փոփոխէք մանկական աշխարհը: Մանուկները մտածող և խօսող մեքենաներ չեն, ոչ, նոքա մանուկներ են, վաղիւ մեզ պէս մարդիկ: Նոքա պիտի սովորեն խօսել, դատել, գիտել, բայց սորա համար պէտք չէ վարժութիւններ արուսական ձևով»: (Conférences pédag... 344 եր.):

Իրական դասերի իրխանակ կարգում են. Connaissances usuelles գրքերը, պապի խօսակցութեան ձևով իւր փոքրիկ թուներն հետ: Ահա քանի մի յօդուածներն վերնագրեր. առաջին համակ հօրը, արտ, հաց, կրօնական և բարոյական ոտանաւորներ և այլն: Բովանդակութիւնն օգտաւէտ է և բազմակողմանի: Օրինակ, երկրագործութեան վերաբերված յօդուածի մէջ երկրագործութիւնը քըննվումէ հետևեալ կողմերից. 1) իբրև ամենակարևոր, 2) իբրև ամենատարածված, 3) իբրև ամենահեշտ և ամենապարզ, 4) իբրև ամենօգտաւէտ մի երկրի համար, 5) իբրև ամենարգիւծաբեր, 6) իբրև մի պարագամունք, որ մարդին աւելի մօտեցնումէ Աստուծուն: Այս բոլորը դետեղված է երկու երեսի վերա, թուերով յօդուածաբար բաժանված: Ուրեմն այս ընթերցանութիւնը նման չէ իրական դասերին, որոնք առաքկայի նկարագրութիւն են, մինչ-

դեռ ընթերցանութիւնն առարկայի տրամաբանական դարգացումն է:

Միարանները մանկավարժական մտքերը տրամաբան էն „Conduite à l'usage des écoles primaires, (Versailles, 1877) գրքում:

Ֆրանսական դպրոցների վերատեսուչները և տեսուչները շատ լաւ դիտեն գերմանական մանկավարժական եղանակներ, բայց չեն գործ դնում ամենեւին: Ֆրանսացիներն իրանց սիստէմն ունին և աշխատում են բարւոքել իրանց սիստէմը: Սշխարհական դպրոցներում բացի բարոյագիտութենից մեծ ուշք են դարձնում գծագրութեան և նկարչութեանը, որոնք դպրոցի ամենասիրելի առարկաներն են: 12—13 տարեկան մանուկները զարմանալի յաջողութեան են հասնում այս առարկայից:

Մանկավարժանոցների մէջ ուսուցչացուներին որոշ եղանակներ չեն հազորդում, այլ տալիս են հիմնական տեղեկութիւններ: Նորա Գրուբէի եղանակին սիրահարած չեն, բայց Փարիզի մանկավարժանոցում (école normale de la Saine d'Auteuil) և նորա վարժոցում շատ և շատ հետաքրքր և նոր բան կգտնէ իւրմքանչիւր մանկավարժը:

Առանձին ուշադրութեան արժանի են Փարիզի մանկանոցներ (Salles d'asile): Մանուսանդ շատ լաւ մանկանոց կայ օրիորդական մանկավարժանոցի մօտ (école normale pour les filles B. C. Batignolles): 3—6 տարեկան մանուկները շատ լաւ սովորում են կարդալ, գրել և երգել: Հինգամեայ մանուկներ գեղեցիկ կարդում են ձայնանիշներ, ուսուց-

չուհին գրումէ տախտակի վերա ձայնանիշներ
և մանուկներն առանց դժուարութեան երգում-
են, նոյնպէս և ուսուցչուհին երգումէ մի եզրանակ
և մանուկները կարողանումեն գրել:

Ֆրանսիայում քնդունված սովորութեամբ դըպ-
րոցներն իրանք վիկայական չեն տալիս, այլ իրանց
աշակերտներին առանձին մասնաժողովներին են
ներկայացնում քննութեան համար: Փարիզում
սկզբնական դպրոցների քննութիւնները լինում-
են Տիւլլըրի շերմանոցներից մինում: 1880 թ.
3000 մանուկներ ենթարկվեցան այնտեղ քննու-
թեանը:

Իրև սկզբնական դպրոցների շարունակութիւն
Ֆրանսիայում երեկոյեան դասընթացներ կան հա-
սակաւորների համար: Ֆրանսացիները ցանկանում-
են, որ միջնակարգ և բարձր ուսման նոյնպիսի ե-
րեկոյեան դասընթացներ ստհմանվին արուեստա-
ւոր դասի մարդիկների համար: Յանկանումեն, որ
սկզբնական ուսումն վերջացնելուց յետոյ, օրէնքը
պարտաւոր համարէ հասակաւորների համար ևս
երեկոյեան դասընթացներին չաճախումն մինչև
21 տարեկան հասակը...

Բազմաթիւ նոր երկսեռեան մանկավարժանոց-
ներ հիմնելուց յետոյ ամբողջ Ֆրանսիայում, ման-
կավարժանոցների վերատեսուչներ և վերատես-
չուհիներ (directeurs, directrices), ուսուցիչներ և ու-
սուցչուհիներ պատրաստելու համար հիմնվեցան
գերշքօթիկ բարձրագոյն մանկավարժանոցներ
(écoles normales supérieures), որտեղ պաշտօնավար
վորձված ուսուցիչներ և մանկավարժներ և ման-

կալարժուհիներ նորից ուսումնասիրում են մանկավարժութիւնը Գրանսիայի առաջնակարգ գիտնական մանկավարժների դասեր լսելով, Բարձրագոյն մանկավարժանոցները գտնվում են Փարիզի Ծոնտընէօրօզ (իգական), Սէվըր և Սէնկլու (արական) արուարձաններում: Մանկանոցների (salles d'asile) համար ուսուցչուհիներ պատրաստելու համար ևս հիմնվեցաւ Փարիզում առանձին դպրոց Pape—Carpantier հռչակաւոր մանկավարժուհու անունով:

Այլև արուեստների ուսուցիչներ պատրաստելու համար, որոնք յետոյ կարողանան մանկավարժական հիմներով սկզբնական դպրոցներում արուեստներ (travaux manuels) ուսուցանել, հիմնվեցաւ նոյնպէս Փարիզում առանձին արուեստների մանկավարժանոց, որտեղ մանկավարժութեան դասեր առած երիտասարդներն սկսում են արուեստներ և նոցա սովորեցնելու եղանակներ սովորել:

Այսպէս տեսնում ենք, որ ամբողջ Գրանսիան, մի երևելի մանկավարժի—պ. Պէկօի—նոր ոճի համաձայն «մանկավարժանումէ» ամենայն կողմից:

Թէպէտ Գրանսական հանրապետութիւնը շատ երկարակեաց չէ դեռևս, քայց կարող է արդէն ասել. exegi monumentum (արձան կանգնեցի): Գոնէ ժողովրդական լուսաւորութեանը նա այնպիսի կազմակերպութիւն տուեց, որով նա հսկայական քայլեր անել սկսեց:

Յեղափոխութիւնների ասպարէզը Ժ. Ծէրլին (ազգ. լուս. նախարար) Թեթև և հարեանցի կերպով շսիսեց, այլ ամենայն ինչ ենթարկվեցաւ:

յառաջագոյն ուսումնասիրութեանը և լրջամիտ քննութեանը:

Եւ այն գրքոյկներ և հատորներ, որոնք մանկավարժական խնդիրները և վերանորոգութիւնները կանխագոյն քննութեան նիւթեր են բովանդակում, արդէն մի գրադարան կարօզ են կազմել:

Ազգ. լուսաւորութեան նախարար Ժ. Ֆէրըին և սկզբնական կրթութեան ընդհանուր վերատեսուչ պ. Բիւխսօնը Ֆրանսիան բարոյապէս և մտաւորապէս վերածնեցին դարոցով եւ մանկավարժանոցով:

ԳՊՐՈՅՆԵՐ ԶԱՐԳԱՐԵԼՈՒ, ԳՊՐՈՅԱԿԱՆ ՊՍԿԵՐՆԵՐԻ ԵՒ
ԱՌՀԱՍՍԲԱԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՃԱՇԱԿԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

Աշակերտները ճաշակը զարգացնելու և նոցա գեղեցկութիւնը սիրել տալու խնդիրը մշակելու համար Ֆրանսիայի ազգային լուսաւորութեան նախարար (նախկին) Ժ. Ֆէրըին առանձին մտնաժողով կազմեց 28 առաջնակարգ մանկավարժներից և գիտնականներից իւր նախագահութեամբ: Նոցա թուումն էին պ. պ. Գրէառ, Պէկօ, Բիւխսօն, Բէրժէ, Բէռ, Մօնօ, Զէվօռ, Դը Բօդօ, Շ. Բիզօ, Դիւրօռ, Հօրէօ, Հավար, Ժանսէն, Դըլաբօրզ, Մարաէն (նոր մեռած), Տրէլա, Միւնց, Պրուսա, Դըրօնչօ և այլն:

Մասնաժողովը խնդիրը բազմակողմանի մշակելուց չետոյ, այս իւր խորիմաստ և շատ համա-

կրկն գեղուցումն ներկայացրեց նախարարին Շ. Բիգոն բերանով.

«Պարոն նախարար, ձեր կազմած մասնաժողովը «Դպրոցներ զարգարելու և դպրոցական պատկերներն մասնաժողով» անուանեցիք: Առաջին նիստը ձեր նախադահու թեամբ գումարվելով, դուք բացատրեցիք ինչ որ սպասումէիք մասնաժողովից և որոշեցիք նորա շրջանը:

Արհեստը միայն նուրբ վաշելու թիւններն աղբւր չէ, ասացիք, այլ նա միևնոցն ժամանակ ժողովրդական կրթութեան հըօր դործիք է, որն անբաղդաբար չախաղանց արհամարհված է մեր երկրում, որտեղ արհեստագիտական (արտիստական) զարգացումն շատ երկար միջոց խելքի և մտքի շռայլութիւն էր համարվում, և պիտանի միայն ոճանց, բաղդի արտօնութիւններ վաշելօղինքին:

Դուք հրաւրեցիք մասնաժողովս ուսումնասիրելու մեր ամեն աստիճանի դպրոցներում գեղեցկութեան պաղաքեր ուսումն մուծանելու միջոցներ: Միևնոցն ժամանակ դուք առաջարկեցիք նորան յայտնելու ձեզ իւր կարծիքը բաղմաթիւ առարկաներն մասին, որ ներկայացրած են սոցն նպատակով զանազան հրատարակօղներ և որոնք նշանակված են թէ դպրոցներն բարոյական զարդարանքի համար, և թէ աշակերտներին իբրև դպրոցական պարգևներ տալու համար, և ձեզ ցոյց տալու նոցա մէջից այն կրերն, որոնք արժանի լինէին աղք. լուսաւ. նախարարութեան հաւանութեանը համ քաջալերութեանը: Միայն բարձրագոյն խորհուրդը կարօղ է, օրէնքով, մեր դպրոց-

ների դռները փակել անբարոյտեան կամ անար-
ժան դատած Հրատարակութեան առաջ, մանկա-
վարժարանի ծայրագոյն արգելանքի և ազդարարու-
թեան այս արածնութիւնն իրաւամբ վերապահ-
ված է նորան: Սակայն վարչութեան պարտք և
պաշտօն է, երբ նա տեսնու մէ օգտաւէտ և Հե-
տաքրքիր Հրատարակութիւն, առաջարկել այն
և նորա տարածմանն աջակցել:

Ձեր կազմած մատնաժողովը, պարտն նախարար,
անմիջապէս սկսեց իւր գործը: Նա կարօզ է ասել,
առանց կեղծ Համեստութեան, որ իւր անդամ-
ների եռանդի պակասութիւնն երբէք զգալի չեղաւ:
Նա բաժանվեցաւ ստորամասնաժողովներ առա-
ւել լաւ ուսումնասիրելու իւր մանրամասներով այս
նշանաւոր պրօգրամն խնդիրներից իւրաքանչիւրը:
Յետոյ ստորամասնաժողովների առաջարկութիւն-
ները Հիմնաւոր վեճարանութիւնների ներքէն
դառնում Համագումար մասնաժողովում: Այսօր իւր
աշխատութիւններին վերջ դնելով, մատնաժողով
պատիւ ունի ներկայացնելու ձեզ այն Հետեւանք-
ները, որոնց Հանաւ նա այս աշխատութիւնները

Վասն մատնաժողովի որ յիշուած յայտնագործութեան
մասին մատնաժողովի մասնաժողովի իրաւաւոր
պատմութեան մի մասն է: Ինչպէս թէ մի նախնական
մտքով մի մասնաժողովի մասն է: Ինչպէս թէ մի
մասնաժողովի մասն է: Ինչպէս թէ մի մասնաժողովի
մասն է: Ինչպէս թէ մի մասնաժողովի մասն է:
Մատնաժողովի առաջին միտքն է, պարտն նա-
խարար, ձեզ շնորհակալութիւն յայտնել նորան
գործակից անելու Համար ձեր մտածած և Հիմն-
աւորած ձեռնարկութեանը: Սակայն պատիւ է, որով
մատնաժողովի անդամներից իւրաքանչիւրը պար-

Տենումէ: Այստեղ խնդիրը Հասարակական կրթութեան լոկ մանրամասնների վերանորոգութիւնների մասին չէ, որքան օգտաւէտ, ցանկալի և պտղաբեր ևս լինէին, և որոնց ներգործութիւնը սահմանափակիւած է: Այսօր խնդիրը վերաբերվում է ամբողջ մեր ազգային կրթութեան վերանորոգութեանը, չեղափոխութեանը: Եթէ այս չեղափոխութիւնը բաղդ կունենայ կատարվում, երբ մեր դպրոցում կմուծանվի գեղեցկութեան տարրը, երբ մեր աշակերտները կհասկանան և կտիրեն գեղեցիկը, մեր կրթութիւնը կլինի ամբողջապէս վերանորոգված և, Համարձակում ենք ստել, ազնուացրած:

Մարդկու թիւնը միայն Հացով չէ ապրում: Գուք չիշեցրէք այս գեղեցիկ խօսքը, և մասնաժողովին սիրելի է կրկնել նոյն խօսքը ձեզանից չետօշ: Անկատկած մեր ժամանակի բարեբաղդ նշան է, որ Հասարակական մտնաւոր Հարստութիւնը շատանում է տարուց տարի: Կեանքը դառնում է ամենքի Համար աւելի բաղդը և աւելի հեշտ: Բայց եթէ այս նիւթական բարօրութեան վերջին խօսքը պիտի լինէր նոյն ինքն նիւթական բարօրութիւն, այն ժամանակ միայն այս առաջադիմութիւնը քիչ բան կլինէր: Սա կնշանակէր զրպարտել մարդկային ցեղը այս քչով բաւականանալու ընդունակ Համարելով նորան:

Յրիշտ վերա Հասարակութիւններ լինելուց ի վեր, ոչ մին չէ եղել առանց կատարելատալի. նաչելով թէ որքան բարձր կամ ստորին կատարելատիպն ունի իւրաքանչիւր Հասարակութիւնը, նո-

րա Համեմատ և տեղ ունի պատմութեան մէջ:

Մարդկութիւնն երեք մեծ զգացմունքով է ապրում. առաքինութեան զգացմամբ, ճշմարտութեան զգացմամբ և գեղեցկութեան զգացմամբ: Նա գիմումէ ինքն ըստինքեան անգիմադրելի ընազդումից շարժված առ այն ամենն, ինչ որ նորան ճշմարիտ, գեղեցիկ, բարի է երևում: Մարդկութիւնը չէ կարող հրաժարվել այս ձգտումից, ինչպէս որ չէ կարող մերկանալ իւր սեփական ընութիւնը: Այս երրակի զգացումն առաջացրեց ամբողջ քաղաքակրթութիւնը: Առաջագիմութեան իսկական անունն այն ջանքն է, որ գործադրվել է հազարաւոր սրտաբեկ կռիւններ մէջ ճշմարտութեանն առաւել մօտ լինելու համար, արգարութիւնն առաւել լաւ ձեռք բերելու համար, գեղեցկութիւնն առաւել լաւ արտաշայտելու համար:

Երկրիս վերա ոչինչ լաւ բան է կատարվել առանց այս երեք զգացմունքից մինի ներգործութեան. սոցանից իւրաքանչիւրն ունեցած է իւր առաքեալներ, իւր հերոսներ, իւր նահատակներ: Երախտագէտ սերունդը միակերպ գետեղումէ իւր փառքի տաճարում և չարդումէ միևնոցն փառաբանութեամբ գիտնականներին, արհեստագէտներին, սուրբերին, — մարդկութեան այս փառաւոր տիպարներին: Կայ մտքի մի պայծառ բարձրութիւն, որտեղ ճշմարտութեան, գեղեցկութեան և առաքինութեան այս երեք գաղափարները միանում են և կարծես հազիւ կարողանում են զանազանվել մին մի սից. չունական փիլիսոփայութիւնն այն բարձրութիւնը ցոյց տալու առաջին պատիւը փա-

յելեց: Սակայն կայ մի ուրիշ տեղ ևս, ուր ժողովուրդներն և խառնվում են նոյնպէս, եթէ կարելի է ասել, գեղեցկութիւնը, ճշմարտութիւնը, և առաքինութիւնը. դա խղճմտանքն է: Ի կատարածած մի վեհանձն գործօղութիւն, մտածող մարդին ցոյց տուած մի աղնիւ ճշմարտութիւն, աշքերին ներկայացած մի հոյակապ ակտորան միակերպ շարժումն հոգին. նոքա միակերպ բարձրացնում են նորան սնտախ կրքերից և ցանկութիւններից կամ եսականութեան ազազ հաշիւներից վեր: Նոքա զարթեցնում են հոգու մէջ միւլնոյն վեհանձն եւանդ, նոքա միակերպ զգացնում են հոգուն իր արժանաւորութիւնը:

Կրթութեան գործ է դրաւել, նուաճել մարդին ամբողջապէս, նուաճել նորան, նորանից առաւել կաարելութեամբ մարդ շինելու: Ինչ ոչ բնութիւնը պատահմամբ և կարծես խարխալելով է անում, կրթութիւնը միւլնոյն գործը կատարում է հետեւողութեամբ, մէտօղով, նա կարող է նոյնը կատարել հաստատուն կերպով: Եւ խելացի բազմակողմանի զարգացմամբ վտարխլելու այս կարողութիւնը, մարդկութիւնը կառավարող օրէնքներ գանելու և յօժարութեամբ նոցա հնազանդելու այս ընդունակութիւնը պակաս պատիւ չէ բերում մարդկութեանը:

Սակայն թե՛ կենք տեսնում, եթէ մի հասցեացք ձգենք հաստարակական կրթութեան վերա մերերկրում մինչև 19 դարի այս երկրորդ կէտը:

Վերջիշխած երեք ընդհանուր բնագոյտկան ըզգացմունքից, սրտնք կառավարում են մարդկութիւ-

նը մին — Ճշմարտութիւն: Ճանաչելու ցանկութիւնը վաղուց վաչելումէ իւր բարերարութիւններէ գընահատութիւնը, իւր իրաւունքների խոստովանութիւնը ամեն բանագէտների կողմից: Գիտութիւնը գլուխ է մեր հասարակական լուսուորութեան ամեն աստիճաններում: Բացի քանի մի չետամնաց անձներից, այսօր ոչ ոք է փառաւորում այլևս տգիտութիւնը:

Կրթութիւնը չարհամարհեց նոյնպէս բարոյական զարգացումն: Ամեն ժամանակ խոստովանած են, որ առաքինութիւնը ժողովուրդներին նոյնպէս անհրաժեշտ կարևոր է, ինչպէս և առանձին անձներին: Հասարակական կրթութիւնը չապաւենեցու միայն ընտանիքներին մանուկներին սրբաբեր սովորեցնելու համար: Նա ինքն աշխատեց կրթել սրտերն ազնիւ կանոններով և լաւ օրինակները վարակել աղքեցութեամբ, պատմութենից, գրականութենից և բանաստեղծութենից առաքինութիւնը փաշտեցնող և փառաբանող փաստեր առաջ բերելով: Ներկայումս սահմանվեցան բարոյագիտութեան դասերը մինչև անդամ մեր սկզբնական գալրոցներում, ինչպէս որ կաշին արդէն մեր միջնակարգ դպրոցներում:

Սա ինչպէս բան է, որ այսպէս լաւ հասկանալուց չետոյ ուսման նշանակութիւնը, բարոյական զարգացման նշանակութիւնը, — Ճշմարտութեան և առաքինութեան զգացմունքը, — այս աստիճան մինչև այսօր կատարելապէս արհամարհված է դեղեցիութեան զգացումն, որ կայ ամենայն հոգումէջ: Մինչդեռ սորա կանոնները նոյնչափ ազնիւ են

և որոս ներգործութիւնները նոյնչափ զօրաւոր:
Նւ կարելի է մի բան դեռևս աւելացնել, աչն է
որ աչն գարուն, երբ բարօրութեան խնդիրը մար-
դիկներն մեծ հոգսերից մին դարձած է, գուցէ
գեղարհետը միայն կարող է նոցա միանգամայն
ամենախառտաբեալ, ամենանորը և ամենամաքուր
վաչելչա թիւններ ստել, նմանապէս միայն գեղար-
հետը կարող է ամենից լաւ փոխարինել նիւթա-
կան բարեբաղլութեան զանազան վտանգները և
սովորեցնել մտաւոր սիրտիանքը զգաշական աըր-
փանքներից բարձր դասել:

Սակաչն պէտք չէ չափադանցութիւն անել. գե-
ղարհետը մինչև այս վերջին ժամանակները բոլոր-
ափին աքտորված չէր Ֆրանսական կթութեանից:
Կայ մի գեղարհետ, և ոչինչ նուազագոյն, որը եր-
բէք չէ կորցրած իւր սեղը հասարակական կթութեան
մէջ, զա գրականութիւնն է: Պրանսական
հասարակութիւնը նորան է սյարտապան իւր փառ-
քի և իւր բարոյական ու մտաւորական արժէքի
մեծագոյն մասը: Այստեղ խնդիրը ոչ գրականու-
թիւնը ստորացնելու, ոչ նորան նուազեցնելու. մա-
տին է: Սակաչն երկու հաւասարապէս ճշմարիտ
բան կայ ատելու. մին, որ գրականութիւնը գե-
ղարհետի ձևերից մինն է և ոչ թէ գեղարհետի
ամբողջութիւնն է: Միւսը, որ գրականութեան այս
գեղատիւրական ազդեցութիւնն որքան բարերար և
արբիւնաւոր և լինէր, մեր հասարակական դպրոց-
ներում միայն սակաւների վարժութեան նիւթ է
եղել:

Մենք սենեցած ենք և սենինք միշտ մեր դըպ-

րօցներում, մեր Համալսարաններում անուանել պը-
րօժէսօրներ, որոնք գիտեն դեղեցիկ կերպով բա-
ցատրել և ծանօթաբանել յունական, լատինական
կամ ֆրանսական հատուածը, շարժել սրտերը Հօ-
մերոսի, Սօֆօկլէսի, Վերգիլիոսի, Տակիտի, Բօսլուէ-
տի կամ Ռասինի մի կրեսով: Բաց միթէ այս բա-
ւական է, միթէ այս է բոլորը:

Ատենաբանութիւն, սրատմութիւն, վիպասա-
նական, քնարերգական կամ ողբերգական բանաս-
տեղծութիւն աւաջ բերած են ի հարկէ թէ նոր և
թէ հին ժամանակներում հոշակապ հեղինակու-
թիւններ,—հարկաւոր է անդադար յորդորել երի-
տասարդներին հիանալ նոցա վերա: Սակայն ա-
մենայն խելք ընդունակ չէ գրականական գեղեց-
կութիւնը ճաշակելու և հասկանալու, բոլոր ու-
սուցիչները կարօղ են վկայել այս ճշմարտութիւնը:
Գուցէ մենչև անգամ գրականութիւնը գեղարհե-
տի բոլոր ձևերից այն ձևն է, որը ամբողջապէս
հասկացվելու համար պահանջումէ ամենազը-
ժտար և ամենահազուադիտ ընդունակութիւն-
ներ, չատկացէս նորա համար որ նա այնքան ուզ-
գակի զգայարաններին չէ դառնում, որքան միս
ձևերը: Այն երկու դռներն, որով գեղեցկութիւնն
ամենասատիկ բաղխումէ և գրաւումէ բոլոր մըտ-
քերը, ախանջ և աչք են, արտաքին ըմբօնօղու-
թեան այս երկու գլխաւոր գործիքները:

Ականջին գիմօզ երաժշտութիւնը, աչքերին խօ-
սող նկարչութիւնը, բանդակագործութիւնը, դոջնը
գրականութեանց աւելի դուցէ գեղեցկութեան
զգացման ընական կրթօղներն են: Նրբ մեր հա-

սարակական կրթութիւնն իւր պրօգրամներն մէջ պլաստիքական գեղարհետներն¹⁾ նոյնպէս նըշանաւոր տեղ կտայ ինչպէս գրականութեանը, միայն այն ժամանակ նա կարօզ կլինի արդարեւ ասել թէ նա արեց ինչ որ կախումն ունէր իրանից նոր սերունդի մէջ գեղեցկութեան ազնիւ զգացումն զարգացնելու համար: Այն ժամանակ կը պատահի, որ սմանք առաւել լաւ կզգան գեղեցկութիւնը դրականութեան մէջ, սմանք երաժշտութեան մէջ, սմանք նկարչական արհեստներն մէջ. զանազան ընդունակութիւններն համեմատ թէ մին և թէ մեկները կզնան ուր որ կտանէ իրանց հանճարը: Շատ սակաւները միակերպ անտարբեր կմնան գէպի գեղեցկութիւնն իւր զանազան ձևերով, առաւել շնորհալիները նորան կհասկանան հաւասարապէս նորա ամեն ձևերով: Ահա հասարակական կրթութիւնն արած կլինի բոլորն ինչ որ իրանից կախումն ունի նոցա օգնելու և մարդկութիւնն ազնուացնելու:

II

Այս մտքերն էին, պարոն նախարար, որ ձեզ ոգևորումէին: Փոքր ինչ բան կատարված է այս

¹⁾ Art plastique—այնպիսի գեղարհետ, որը ստեղծում է: Թէև ամենայն դեղարհետ ստեղծում է, բայց պլաստիքականն աւելի զգալի, շօշափելի կերպով է ներկայացնում գործը, օրինակ քանդակագործութիւնը: Ուրեմն plastique յատկապէս նշանակում է ստեղծական կամ տեղծօղ, և այսուհետև ստեղծական բառ կգործածենք:

վերջին տարիներս երաժշտութեան Համար, նոյն-
չափ և նկարչական գեղարհեստների Համար, բաց
գեռ շատ է մնում կատարելու: Թէ նկարչութիւնը
և թէ երաժշտութիւնը շատ երկար ժամանակ Հա-
մարվումէին մասնաւոր կրթութեան առարկա-
ներ, որոնք աւանդվումէին առանձին յատուկ
գպրոցներում և օգտաւէտ էին Համարվում միայն
նոցա Համար, որոնք կամեցումէին դառնալ ար-
հեստագէտներ, երաժշտութեան հեղինակներ, եր-
գիչներ, գերասաններ, ճարտարապետներ, նկարչ-
ներ, քանդակագործներ, զարդարիչներ (décorateurs),
կամ թէ կարօղութեան և կրթութեան արտօնու-
նութիւն վախճողիների Համար, որոնց թուլատրվումէ
պարզապէս ժամանակը լուստոր և պարզ արհեստ-
սէրներ լինել:

Իս. ք. առաջարկեցիք մասնաժողովիս միջոցներ
որոնել ամենայն աստիճանի ուսման մէջ աչքերի
գեղասիրական կրթութիւն մտնանելու: Նա մեծ
եռանդով աշխատեց, որովհետեւ թէ իւր և թէ ձեր
Համար, պարոն նախարար, աչքերի այս կրթու-
թիւնը գեղեցկութեան զգացումն զարթեցնելու
Համար գուցէ ամենանշանաւոր, ամենազօրաւոր
միջոց է: Բոլոր զգայարաններից աչքն ամենաը-
նականաբար հաւատար է մարդիկները մէջ: Նա է
որ ամենից շատ հազրդակցումէ մեզ արտաքին
աշխարհի հետ: Նա է որ ամենից շատ զգացողու-
թիւններ և մտքեր է աւելիս մեզ: Միայն նա է
մեզ ճանաչեցնում գոյնը, նորանով ենք ստանում
գծի և քանդակի ըմբռնումն: Աչքերով է որ ա-
ռաջին անգամ յայտնվումէ գեղեցկութիւնը մա-

նուկին: Գարձեալ աչքերով է, որ մենք ստանում ենք գեղեցիկ թեան ամենազօրեղ և ամենաստուգ տպաւորութիւնը:

Նրաժշտութիւնն իբրև մտքի մի չափշտակութիւն շատ անորշ և ընդարձակ է: Ստեղծական գեղարհեստների մէջ ամենայն ինչ պարզ և որոշված է: Բանաստեղծութիւնն ամեն ժամանակ ընդունած է հրէշային տարր բաւական հեշտութեամբ, ստեղծական գեղարհեստներն մերժում են նորան: Անճոռնի, տգեղ գործերն անգամ չեն կարողացել այստեղ երկարօրէն դպրոց կազմել: Աչքը խուսափում է ինչ որ անտեղի է, սուտ է, անարդ կամ զղուելի է: Նա ընդհակառակն որսնում է և հետեւում է ամեն տեղ, ուր որ գտնում է չաջող չարմարութիւն, շնորհը զօրութեան հետ, վազելչութիւնն ազնուութեան հետ, ներդաշնակ լոյսը, դերաբեկ կամ կարծր գիծը, շարժօղութիւնը և կեանքը: Յունաստանը կարողացաւ դրականութեան մէջ հիանալի բնաւորութիւն մուծանել ըստեղծական գեղարհեստների վարդացմամբ. մեղանից ոչ ոք կարող է կարգաւ այսօր Սօփոկլէսի մի եղերերգութիւն կամ Կեմոսթենէսի մի ճառ առանց անմիջապէս մտածելու: Փիգիասի արձանների մասին: Կարելի է աւելացնել, որ մեր ցեղն առաւել ընդունակ է քան թէ որեւից ուրիշը գուցէ, նոր ցեղերի մէջ, աչքերով գեղասիրական կրթութիւն ստանալու և նորանից օգուտ քաղելու: Նա ցոյց էր տուել միջին դարերի ժամանակներից իւր բնական հանճարը նկարչական արհեստների վերաբերմամբ: Իսկ գեղարհեստների վերա-

Տնունդն սկսվեցաւ թէ չէ, անդիմադրելի սաստ-
կութեամբ դիմեց գէպի յարուցեալ Հին դեղեց-
կութիւնը, գէպի նոր գեղեցկութիւնը, առաջնի
փառաւոր ժառանգորդը, որը նոր ծնել էր Իտա-
լիան: Փրանսիան կարօղ է ոչ նուազագոյն մասն
ունենալ աչն Հոյակապ շարժման մէջ, որը Հե-
տեկցաւ իտալական շարժմանը: Նա կարօղ է մօտ
չորս դարերից իվեր ժամանակից պարճանքով ա-
ռաջ բերել թէ իւր ճարտարապետները, իւր նկա-
րիչները, իւր քանդակագործները, իւր դճագրող-
ները, իւր փորագրողները և թէ իւր բանաստեղծ-
ները, իւր Հեղինակները, իւր վիլլատփաները,
իւր պատմագիրները: Եթէ Իտալիայից յետոյ Իս-
պանիան, Հօլլանդիան, Ֆլանդրիան, Անգլիան մու-
ծին արհեստի մէջ մի մի նոր բան, Փրանսիան
անմիջապէս Հաւասար եռանդով սկսած է ուսում-
նատիրել Հօլլանդական, Ֆլանդրական, իսպանա-
կան, իտալական դարոցը. նա առաջացրած է ամեն
տեսակներէ մէջ աչնպիսի աշակերտներ, որոնց նոյն
խի ուսուցիչները չէին կարօղ չչարդել, որովհետեւ նո-
քա մի փոքր աւելի էին քան թէ աշակերտներ: Փրան-
սիան վերջապէս չէ բաւականացել նմանելով, նա
ևս ստեղծել է: Նա բազել է դեղարհեստի առաջ
նոր ճանապարհներ:

Եթէ այսօր, առանց սնտախ ինքնատիրութեան,
Փրանսիան կարօղ է պարճեմալ իւր դերադանդու-
թեամբ, դա ստեղծական դեղարհեստներէ շնոր-
հով է: Աչ միայն Հիանսումին Փրանսիայի նկարիչ,
ներէ, քանդակագործներէ, դճագրողներէ վերա,
աչլև խոստովանումեն, որ նորա ձեռնարուեա-

ների արգիւնաբերած իրերը վսեմութիւն, առաւելութիւն, նուրբ ներդաշնակութիւն ունին, որոնք Հաղորդվումեն նոցա մեր արուեստաւորների ճաշակից և նոցա գատոյ Հասարակութեան ճաշակից: Այս իատան ակներև չէ ցոյց տալիս միթէ, որ Քրանտական ցեղը ստացել է բնութենից ամենալաճող տրամադրութիւններ գեղեցկութիւնը Հասկանալու և արտայայտելու գեղարհետի ձևով և աչքերով գեղեցկութեան առողջաբար և արդիւնաւոր ուսումն ստանալու: Ամեն Քրանտական ականջներն, աւա՞ղ, արդարացի չեն, սակա՞յն Պրանտիալում գրեթէ ամեն աչքեր լաւ են: Թող ցոյց տան մեր մանուկներին նկարի, քանդակի կամ գոյնի օգնութեամբ գեղասիրական զգացումն զարթեցնելու ընդունակ օրինակները, նոցանից ոչ մին կգտնվի աչադիտի գասերին անհատն: Այս գեղասիրական կրթութիւնը մատակարարվումէ ուղղակի նկարչութեան ուսուցմամբ, որը դորձ է դնում թէ աչքը և թէ ձեռք, որը սովորեցնումէ առաւել լաւ տեսնել, և տեսնել ամեն առարկաների մէջ մանաւանդ ինչ որ էականն է և չատուկ: Ձեր նախարարութեան օրով արդէն շատ բան սրած էք ամեն տեղ մուծանելու—թէ ուղղնական և թէ միջնադաս կրթութեան մէջ նկարչութեան ընդհանուր և պարտաւորական ուսումն: Քանի մի տարուց չետոյ այս վերանորոգութիւնը մտած կլինի մեր բոլոր գպրոցներում, և մանուստղորդի այս մասին շատ չոչտեր ունի:

Սակա՞յն մի անհատի կամ մի ցեղի գեղասիրական կրթութիւնը միայն նկարչութեան ուսուց-

մամբ չէ լինում: Նա չէ լինում միայն պարտա-
ւորեցնելով իւրաքանչիւր մանուկին շրջագծեր
ձեւացնելու, քանդակներ զգալի կացութեանը,
գեղեցիկ նախապերն օրինակելու: Նա լինում է
նոյնպէս, և մասնաժողովը Համարձակում է գրել թէ
ասել, նա լինում է առատելապէս գեղեցիկ դոր-
ծեր և երկասիրութիւններն անդադար տեսնելով:
Այստեղ ներդրում է գեղեցիկ թեան տեսքը
միայն, և ահա այս անմիջական աղլեցութիւնն
է արդէն հար: Նկարչութեան ուսումն, դասա-
տուութեան պաաճառով, վերլուծում է, բաժա-
նում է ամբողջը: Մանրամասնութիւնն արգելում
է շատ անգամ ամբողջը տեսնելու, ինչպէս որ
ճառերն արգելում են անտառը տեսնելու: Այլև
ուսումն ջանքեր է պահանջում և սա նորա ար-
ժանիքներէն մին է. արդ մարդկային, մանաւանդ
մանկական, բնութեան մէջ կայ, որ ջանքը վա-
խեցնում է, երբեմն և ձանձրացնում է: Ուսումն
վերջապէս միայն չատուկ որոշ ժամերին է լինում:
Գեղեցիկ մի երկասիրութիւնն ընդհակառակն, մա-
նուկն կամ մարդն աչքերին ներկայացրած, և նորան
անդադար, ամեն վաշիտան ներկայացրած լինելով,
Հրապուրում է և կանչում է նորան: Նա ներկայա-
ցնում է միանգամայն բազազրեալ և ներդաշնակ
մի ամբողջութիւն: Սթէ մարդը նորան չէ թա-
փանցում և չէ հասկանում, երկասիրութիւնը
Համբերութեամբ սպասում է այն ժամին, երբ
նա կէմանայ նորան բոլորովին զին դնել:

Փոքր առ փոքր մանուկը կմտենայ դործին և
կմտերմանայ, նա ինքն կանցնէ նորա խորհուրդ:

Հատկանալու ատտիճանները: Յթէ կարևոր է որ-
և երբ ջանք գեղեցիութիւն զգալու Համար, նա
գործ կրնէ այդ ջանքը այնքան աւելի յօժարու-
թեամբ և հեշտութեամբ, որ նա չէ խոնարհում
ոչինչ ստիպողութեան առաջ, որ նա հետևում է
կը բնութեան միակ ձգտմանը և այդ անում է
կնքն իրան բաւականութիւն տալու Համար: Գե-
ղեցիկ իրերը տեսնելով այքը զարգանում է և
կրթում է անզգալի կերպով, կարգի և յարմա-
րութեան զգացումն զարթում է, գեղեցիութեան
պատկերը հետզհետէ աւելի որոշ է ներկայա-
նում մտքին: Մի օր վերջապէս այս Համբ բող-
բօջման, այս անզգալի աճման պատճառով գե-
ղասիրական կրթութիւնը լինում է ոչ թէ լրացած—
այս երկրում ոչինչ երբէք լրացած է— այլ առողջ
և ուժեղ: Այն պատանին, որ մի անդամ գեղեց-
իութեան հրատարակներն ենթարկվեցաւ, այլևս
չի դադարի նորան սիրելուց. նա հետամուտ կը
լինի և կըրնէ նորան ամեն տեղ: Այսպէս ահա
գեղարհեստը, կնչպէս յաճախ ասած են, մեծ
դատտիարակ է: Ամեն բան բնութեան մէջ է, և
ճշմարիտ արհեստագէտներն ընդունակ լինելով
առաւել լաւ տեսնելու քան թէ Հասարակ մար-
դիկ, նորանից են քաղել ամեն յաջողակ և ներ-
դաշնակ ձևեր, գծեր, գոյն, և սովորեցնելով ուրիշ
մարդիկներին առաւել լաւ տեսնել, հասկացնում
են նոցա գեղեցիութիւնը և գտնել են տալիս
նոյն բնութեան մէջ մինչև այն ժամանակ իրանց
անյայտ գեղեցիութիւնները:

Ուրեմն բաւական չէ միայն ուսուցանել նկար-

չութիւն մեր դպրոցներում. Հարկաւոր է նոյն ինքն
դպրոցը շինել [Թանգարան, մի տեսակ սրբութիւն
որոց (սրբավայր), որտեղ Թագաւորէր գեղեց-
կութիւնը գիտութեան և առաքինութեան հետ:

Հարկաւոր է, որ մանուկը դպրոցում շրջապատ-
ված լինի աղնիւ գործերով, որոնք անդաւար խո-
սէին նորա աչքերի հետ, զարթեցնէին նորա
հարցասիրութիւնը, կրթէին նորա հոգին: Հար-
կաւոր է, որ ամեն բան նորան կրթէր այնտեղ
ներդաշնակ ձևերով և սրբախոթեան ու պարզու-
թեան օգը պատէր նորան: Հարկաւոր է, որ գե-
ղարհետը հասնէր մանուկին ամեն կողմերէց ինչ-
պէս իւր ծծած շրջապատող օդը, որպէս զև այս
հիանալի աղբւրներէց, մի բանաստեղծի խօսքի
համաձայն, ամեն օր «կեանքը և գեղեցկութիւնը
իջնեն նորա սրտի մէջ»: Մեթէ չենք աշխատում
ամենքս մեր առանձնատենեակներում, մեր տնե-
րում ժողովել մեզ առանձնապէս դմալեցնող
բանի մի գեղարհետական գործերը, շատ անգամ
նոցա վերա նաչելով աչքերս զուարթացնելու: Մ-
թէ Փարիզը այսչափ ազդու կերպով պահպանում
է նոցա, որոնք բնակումեն նորա մէջ, եթէ փա-
րիզցի արուեստաւորը (գործատորը) մեծ մասամբ
արհեստագէտի ճաշակ ունի; մեթէ սորա պատ-
ճառն արդարև այն չէ, որ Փարիզը մի ընդարձա-
կագոյն և հոյակապ [Թանգարան է:

(Կշարունակվի:)

Ա Ռ Ա Ջ:

(Պ Լ Է Ղ Է Ե Կ Ժ Ի Կ):

— Առաջ, անվախ և աներկմիտ, ընկերներ,
Առաքինի քաջազնութիւն է գործ մեր.

~~Մեր~~ Վզնիւ կեանքի փրկութեան սուրբ արշալոյս,
Երկնքի մէջ կանխատեսայ ես այս լոյս:

— Դէհ, Համարձակ միմեանց ձեռներ արդ մեկ-
եւ միասին առաջ շարժենք և դիմենք. [նենք
Թող դսրոցի և գիտութեան դրօշի տակ
Հգօրանայ, գարգանայ մեր ուխտ միակ:

Անարգութեան և ստուգութեան քուրմերին
Կնխատենք ճշմարտութեան բարբառով,
Քնածներին անհոգ քնից կարթնացնենք,
Եւ մեր քաջ գօրք ի պատերազմ կտանենք:

Ստեղծելու չենք ոչինչ կուռքեր մեզ դօրեղ
Ոչ երկրի մէջ, ոչ երկնքում, ոչ մի տեղ,
Եւ աշխարհի բոլոր բարիք, պարգևներ
Ձեն կաշառի մեզ, որ պաշտենք այն կուռքեր:

Այլ կսկսենք մենք քարոզել անձնուէր
Աղքատներին, Հարուստներին անսուտ սէր,
Եւ կտանենք սորա Համար Հալածանք,
Ներելով միշտ մեր դէմ արած թշնամանք:

Երանի ով արիւնաժուժ խիստ կռուում,
Մանր վիշտերով իւր կեանք մաշել չէր խնայում,
Իբր անպիտան և խորամանկ ծոյլ ծառայ
Իւր տաղանդը չթաղեց նա անխրնայ:

Թող իբրև աստղ քաջ ուղեցոյց մեզ Համար
Ճշմարտութիւն պայծառ վառվի անդադար,—

Անձնանուէր և ազնիւ ճայն, խմացէք,
Աշխարհիս մէջ գուր հնչելու չէ երբէք:

Արդ, եղբայրներ, եղբօր խօսքս եկ լսենք,
Քանի որ թարմ երիտասարդ ոյժեր ենք.
Առաջ, առաջ, դէպի մեր սուրբ նպատակ,
Ինչ որ բերէր ապագայում մեզ վիճակ:

Իշխան Բաղրատունի:

ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ:

Հայագն բազմաթիւ ուսուցիչներն ուսուցչական պաշտօն են վարում գիւղերում, հեռաւոր անկիւններում և խորշերում, որտեղ ոչ դպրոցն ունի գրքեր և ոչ իրանք կարօղ են երբէք իրանց հաշու ընթերցանութեան կարևոր գրքեր ձեռք բերել: Նոցա համար, գուցէ շատ քաղաքաբնակ ուսուցիչների համար ևս, առանձին բարերադուլութիւն կլինէր, եթէ սահմանվէր շարժական մատենադարան: Այս մատենադարանի, որ առ այժմ կարօղ էր միայն մի կեդրոնատեղում, օրինակ Թիֆլիսում, սահմանվել, նպատակը կլինէր. բովանդակել իւր մէջ և հասցնել գիւղական ուսուցիչներին կարդալու այն մանկավարժական և գրականական հեղինակութիւններն, որոնք անհրաժեշտ կարևոր են համարվում ուսուցչին նորա բարոյական և մշտաւորական զարգացման համար, ինչպէս սնունդը ֆիզիքական զարգացման համար:

Ժամանակով գուցէ իւրաքանչիւր թեմական վե-

րատեսուչ Հնարաւոր Համարէ Թեմական շարժա-
կան մատենադարան կազմել:

Շարժական մատենադարան կազմելու Համար
առաջարկումենք ահա քանի մի կարևոր նախա-
գիտելիներ իբրև նախագիծ, որը կարող է մշակ-
վել ի հարկէ:

Մատենադարանը կարող է երեք բաժանումն
ունենալ.

1) Գրականական բաժանումն (ընդհանուր և ազ-
գային գրականական պատմութիւն, ընդհ. և ազգ.
պատմութիւն, աշխարհագրութիւն, քննադատու-
թիւն, բանաստեղծութիւն և ընդհանուր գրակա-
նական երկասիրութիւններ):

2) Գիտնական բաժանումն (լեզուաբանութիւն,
քերականութիւն, թուարանութիւն, բնագիտու-
թիւն, բնական պատմութիւն, առողջապահութիւն,
առտնին, գիւղական և քաղաքական տնտեսու-
թիւն):

3) Մանկավարժական բաժանումն (կրօնագի-
տութիւն, բարոյագիտութիւն, հոգեբանութիւն,
մանկավարժութիւն, մէտօղիկա, մանկավարժու-
թեան պատմութիւն, դպրոցական օրէնսգիտու-
թիւն):

Մատենադարանի մէջ պիտի լինին վերոյիշված
բաժանումներին վերաբերեալ Հանրահռչակ հեղի-
նակներէ երկասիրութիւններ հայերէն, ռուսերէն
և ֆրանսերէն: Թեմական վերատեսչի մասնակ-
ցութեամբ, մատենադարանը կազմելու Համար
պիտի ընտրվի յանձնաժողով, որի անդամները պիտի
հօգան և զտնեն կարևոր դրամագլուխը, կզնեն

գրքերը և կապեն գրքերի ցուցակը, վարչական յանձնաժողովը, բացի թեմական վերատեսչից, որն յանձնաժողովի նախագահ պիտի լինի, կկազմվի չորս տարի ժամանակով ընտրված երեք անձներից, որոնք կհոգան մատենադարանի պահպանութեան, ընդարձակութեան և քարտուղարի ուձկի մասին: Մատենադարանի ցուցակը ձրի պիտի ուղարկվի ամեն ուսուցչին, ով կենդրէ վարչութեանց: Գրքերը խնդրելու նամակը վարչական յանձնաժողովին պիտի ուղղվի: Նամակում (որ կարող է Յ կօպ. բաց նամակ լինել) նշանակված պիտի լինի.

ա) Խնդրած գրքերի ճիշտ վերնագիրը:

բ) Ժամանակը, որքան որ խնդրողը ցանկանում է պահել գրքերը, որպէս միջոցը չէ կարող երբէք երկու ամսից աւելի լինել:

գ) Խնդրողն ճիշտ հասցէն, թէ ո՞ր ճանապարհով կարելի է նորան գիրք հասցնել, եթէ գիւղը նամականոցի (պօչտայի) ճանապարհի վերա չէ:

դ) Երկբառ վկայութիւն հոգարարձութենից կամ տեղական քահանայից թէ խնդրող անձն արդարև ուսուցչական պաշտօն է վարում:

1) Գրքերը պիտի վերադառնան առ վարչական յանձնաժողովն, ժամանակամիջոցը լրանալիս, նոյն դրութեամբ ինչպէս որ ուղարկված էին: Միայն վերադարձի ծախսը ուսուցչի վերա է:

2) Իւրաքանչիւր անգամ խնդրած հատորների քանակը Յ գրվանքայից աւելի պիտի չլինի:

3) Յառաջագոյն ստացած գրքերն անշուշտ վերադարձրած պիտի լինին, նոր գրքեր ստանալու համար:

4) Այն ուսուցիչները խնդիրներն աչլես ընդուն-
վելու չեն, որոնք վերագարձրած չեն լինի գրքերն
երկու անգամ, նշանակված միջոցին:

5) Ի դէպս գրքեր կորցնելու կամ մնասելու,
ստացող ուսուցիչը պարտաւոր է վճարել գրքերի
գինը, որը նշանակված պիտի լինի ցուցակում, կամ
նոցա փոխարէն նորերը գնել և ուղարկել:

ԻՐԱԽՍՍՈՒԹԵԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍ
ԲԵՂԺԱԿԱՆ ԴՊՐՈՅՈՒՄ:

Տարածեան լաւ եւ վատ հարրոյիչներ:

Աշակերտը.—Պարոն ուսուցիչ, նոր ես մի բան
տեսայ, որ ինձ շատ զարմացրեց: Երէկ երեկոյեան
սայլագործն անիւններն օդեր էր հագցրել և կրակը
հանգցրել էր ջրով: Այս բոպէս, դպրոց գալիս,
բարձրացայ մոխրի կոյտի վերա և գգացի, որ մոխ-
րակոյտը դեռևս բոլորովին տաք էր:

Ուրիշ աշակերտ.—Այդ զարմանալի չէ: Ուրեմն
դու լսած չես երբէք, որ պապս պատմումէր մեզ
թէ նախ քան քիմիական ծծմբաքներ հնարելը,
խանձողը երեկոյեան միշտ թողնումէին մոխրի
տակ և միւս օր նա դեռևս վառած էր լինում,
որովհետև մոխիրը նորա վերա ջերմութիւն էր
արձակում:

Ուսուցիչ.—Ուրեմն դուք կարծումէք թէ մոխիրը
ջերմութիւն է արձակում: Աղրւածա-

գից շինած վերմակն անկասկած նոյնպէս Չերմութիւն է արձակում, որովհետև մենք նորանով ենք ծածկվում գեշերը տաք մնալու համար:

Աշ. — Այ՛ս:

Աւ. — Ըստ երևոյթին, կարծես թէ սոսաճ ստոյգ է, և ահա մի ուրիշ փաստ, որ իբր հաստատում է ձեր բացատրութիւնը: Կառ տնտես կիւնը, նախքան դաշտ գնալը առաւօտեան գործի, ճաշ է պատրաստում բոլոր ընտանիքի համար: Եթէ նա կամենում է 5—6 ժամից յետոյ կերակուրը տաք գտնել, գիտենք նա թի՛ն է անում...

Աշ. — Նա դնում է նորան բարձերի կամ վերմակի տակ և այնպէս է լինում, կարծես թէ նա թողած լինի կերակուրը բոլոր ժամանակ կրակի վերայ:

Աւ. — Այ՛ժմ ո՞վ կասէ ինձ թէ սրտեղ կարող էի դնել մի կտոր սառույց, որ նա չհալվէր, չնայելով սենեակիս տաքութեանը... Գարձեալ աղուամագի վերմակի տակ: Իսկապէս մոխիքը և աղուամագը չեն արձակում ոչ Չերմութիւն, ոչ ցուրտ: Նոքա մի աստիճան անգամ չեն փոխում այն տեղի օդը, որտեղ որ կան: Այս մարմիններն արգելում են միայն տաքութեանը տարածվելու, ցրվելու. նոքա նորա առաջ մի տեսակ պատուար են դնում, նոքա կարող են բաւականաչափ տաքանալ մի կողմից և ցուրտ մնալ միւս կողմից. մոխիքը հագիւ տաք է լինում արտաքուստ և այրում է ներքուստ, որտեղ նա կրակին է դիպում: Առաւօտեան ձեր վերմակը տաք է լինում ներքուստ և ցուրտ — արտաքուստ:

Ընդհակառակն դե՛ք կրակի մէջ ունելիքի մի

Ճայրը, և մի երկու քաղցից յետոյ փորձեցէք նորան վերցնել: Զգուշացէք մատներիդ... Դուք կիմանայիք մատներիդ փոքր ինչ այրվելով, որ Չերմութիւնն արագութեամբ տարածվել է երկաթեայ ձողի բոլոր երկարութեամբ: Այն մարմինները, որոնք այնպէս թոյլ են տալիս Չերմութեանը հեշտ տարածվելու իրանց մէջ ամբողջութեամբ, ասվում են լաւ հաղորդիչներ: Բնահակառակն միւսներին ասում են վատ հաղորդիչներ: Երկաթը լաւ հաղորդիչ է, մոխիրը և աղւաամազը Չերմութեան վատ հաղորդիչներ են:

Մինչդեռ ժիւլը կգնայ մեզ կբերէ մի կտոր լեչակ, լաւ վառված մի կտոր կբախ և մոմ, որոնք կարևոր են մի երկու փորձերի համար, մենք կսկսենք ծանօթանալ թէ ինչ մարմիններ են լաւ կամ վատ հաղորդիչներ:

Սոլորբար, մեր շոշափած իրերն առաւել ցուրտ են քան թէ մեր ձեռք: Արդեօք նոքա լաւ հաղորդիչներ են: Մեզանից առած Չերմութիւնն արագութեամբ տարածվում է շոշափած ամբողջ իրի մէջ և այնտեղ կորչում է: Նոքա դժուար են ընդունում ձեռի Չերմութիւնը և մեր վերաշատութիւնը զգալի ցուրտ տպաւորութիւն են անում, օրինակ մետաղներ, մարմարիոն, քարեր, և այլն: Կամ թէ արդեօք մեր շոշափած իրերը վատ հաղորդիչներ են: Այս ևս կայ, երբ մեր տուած Չերմութիւնը մնում է շոշափած տեղում. օրինակ փայտ, գործվածներ կամ կերպասներ, օդը մանաւանդ Չերմութեան վատ հաղորդիչներ են:

Աշ.— Որովհետև մետաղը լաւ հաղորդիչ է, իսկ

փայտը չէ, անկասկած այս սրտաճառով է, որ
Թիակի երկաթն աւելի ցուրտ է քան թէ կոթը:

Ու.—Այո, այդպէս է, հոգիս: Յաճախ ասում են
թէ սալայատակն աւելի ցուրտ է քան տախտակը,
և թէ տախտակն աւելի ցուրտ է քան թէ գորգը:
Այս ստոյգ չէ, որովհետև, եթէ ջերմաչափ դնէին
միևնոյն տեղում ժողովված գորգի, տախտակի
կամ աղիւսի վերայ, միևնոյն ջերմութիւնը կգրա-
նէին: Ուրեմն ինչ ասելու է:

Աշ.—Այն որ սալայատակը լաւ հաղորդիչ է,
տախտակը նորայ չափ լաւ հաղորդիչ չէ, եսկ գոր-
գը առաւել վատ հաղորդիչ է:

Ու.—Վերցնենք մեր դպրոցական թանգարանից
մի կտոր նուրբ կտաւ և մի բամբակեայ կտոր:
Սհա սեղանի վերայ են: Էդուտու, եկէք շոշափե-
ցէք:

Էդուտու.—Պ. ուսուցիչ, կտաւն աւելի ցուրտ է:

Ու.—Այսինքն ջերմութեան աւելի լաւ հաղոր-
դիչ է: Հապա, ի՞նչի ենք հազնում հազուտ, ճեր-
մակեղէն:

Աշ.—Յրտից պահպանվելու համար:

Ու.—Այո, մեր ջերմութիւնը պահելու համար:
Հագուտան աղէթօք լաւ թէ վատ հաղորդիչ պետի
լինի: Մտածեցէք մի վայրկեան...

Աշ.—Նա վատ հաղորդիչ պետի լինի: Եթէ օրի-
նակ երկաթ հազնում լինէինք, ձմեռը կտառչէինք
և կտապակվէինք ամառը:

Մի ուրիշ աշ.—Հապա հին ասպետները...

Աշ.—Հին ասպետներն ուրիշ հագուտա ունէին
երանց զբահներն տակ:

Ու.—Այն, թէն շատ սիրուն Հագուստ չէր այն։
Սասցէք ինձ այժմ, ինչ ճերմակեղէն նախամե-
ծարելի է նուրբ կտաւից թէ բամբակից։

Աշ.—Բամբակից, որովհետեւ նա այնքան լաւ
Հաղորդիչ չէ։

Ու.—Արդարեւ, բամբակը տաքանում է և սառ-
չում է աւելի դժուարութեամբ քան թէ կտաւը։
Սակայն կտաւն աւելի է պահանջլուծ։ Մարդիկ
վախենում են աղքատ երևելուց, բամբակեայ ճեր-
մակեղէն դործածելով, և ունայնասիրութիւնն այս-
տեղ, ինչպէս շատ ուրիշ Հանգամանքներում, վնաս
է Հասցնում առողջապահութեանը։

Այն բուպէիս ասացի, որ օդը շատ վատ է Հա-
ղորդում ջերմութիւնը, աւելի վատ քան թէ ջու-
րը, օրինակ. երբ օդը 15° ունի, մենք լաւ ենք
ասում, սակայն 15° ջրի մէջ մենք երեք բուպէ ևս
չէինք կարող անշարժ մնալ, առանց դողդողալու։
Եթէ օդը վատ Հաղորդիչ է, Հապա ինչի ենք Հա-
գուստ Հագնում։ Այդ անում ենք օդը բանտարկե-
լու, արգելելու Համար։ Մեր երեսին խնօղ քամին
մեզ զուարթացնում է, իսկ անշարժ օդը տաքանում
է և բարձր է պահում մեր մարմնի ջերմութեան
աստիճանը։ Ուստի ամենատաք Հագուստները նոքա
են, որոնք աւելի օդ են պարունակում իրանց մէջ,
օրինակ. թաւամազ Հագուստներ, բրդեայ դործ-
վածներ, մորթիներ, աղուամազեր։ Երկու թեթեւ
Հագուստն առաւել լաւ է քան թէ մի ծանրը։
Մենք մեզ ծածկում ենք անշար-
ժացրած օդով։

Առ Հասարակ մանրաթել կամ մոխիր դարձօղ

և փշրվող մարմինները ջերմութեան վատ հազոր-
դելներ են. նորա անշարժ օդի իսկական մթերա-
նոցներ են...

Ահա մեր նիւթերն ևս եկան:

Կտրումեմ լեչակի կտորը և ահա մի ըսպէում
այրվումէ կրակին դիպչելով: Միւս կտորը պինդ
կացնումեմ դրան պղնձէ կոթին և վերան պառ-
տեցնումեմ կրակը. նուրբ կտորը և ոչ խանձվում
է անգամ: Եկէք, փչեցէք, ժօղէ՛ք, կտեսնէք որ
նա չի այրվի. պղինձն իբրև լաւ հաղորդիչ, սա-
ռեցնումէ լեչակը և ազատումէ նորան:

Այժմ ես կացնումեմ այս տոմսը գրչակոթին,
այնպէս որ մասամբ նա ծածկէ կոթը, մասամբ
ծալրի երկաթը: Բոցավառ մոմի վերա բռնելով,
դուք տեսնումէք, որ փայտի կողմից թուղթը
այրվումէ, իսկ երկաթի կողմից մնումէ անվնաս:
Առաջարկումեմ ձեզ այս փորձը կրկնել և նորա
բացատրութիւնը ներկայացնել ինձ ձեր յետագայ
դասին, որի համառօտ բովանդակութիւնը այս է.

Բովանդակութիւն. Ի՞նչ պիտի հասկանանք ջեր-
մութեան լաւ և վատ հաղորդելներ ասելով:—
Ի՞նչպէս իմանալու է լաւ կամ վատ հաղորդելի-
ներ:—Օրինակներ:—Սղուամազն վերմակը և մո-
խիբը ջերմութիւն չեն արձակում:—Լաւագոյն հա-
զուտը, բամբակն աւելի առողջարար է քան թէ
կտաւը:—Մենք օդ ենք հազնում:—Փորձեր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ:

Ամենայն թէ ուսարնակ և թէ թիւրքարնակ
Հայերին այժմ զգաղեցնող ամենամեծ խնդիրը նոր
կաթողիկոսի ընտրութեան խնդիրն է, թէ ով պի-
տի ստանայ Ս. Էջմիածնի Հայրապետական գա-
ւազանը և նորա գորութիւնը, և նորանով իբր
վայելչապէս տնօրինէ մեր ամենայն գործերը: Մի-
ևնոյն խնդիրը բոլորանուիրաբար պիտի զբաղեցնէ
Մանկավարժանոց ամսագրին ևս. որովհետև կաթո-
ղիկոսն է եկեղեցու հետ միասին մեր դպրոցներէ
տէր, պաշտպան և ծայրագոյն վերատեսուչ: Նոր-
ընտիր Հայրապետը պիտի նորոգէ և ուղղէ, վերըս-
տին պիտի ծնէ մեր հոգևոր դպրոցները, սկսելով
անշուշտ Էջմիածնի Կ. Ճեմարանից, որոնք ընդհան-
րապէս թշուառ հոգեվարք դրութեան մէջ են
գտնվում: Բայց մեր ամենքիս անդադար զբաղ-
մունքը և բարեմաղթութիւնները նոր կաթողիկոսի
մասին ունին արդե՞ք որևիցէ նշանակութիւն: Մեր
նոր կաթողիկոսը պիտի կարօղանայ արդե՞ք փա-
փագելի փրկութիւն հասցնել մեր խառնիխուռն և
վայրենի գործերին, եթէ մենք ամենքս—հոգևո-
րականներ և աշխարհականները, գրօյներ և ըն-
թերցօյներ, մեծեր և փոքրեր, հարուստներ և
աղքատներ—այնպէս պիտի մնանք, ինչպէս որ
կանք այժմ, եթէ մեր մէջ նոյն կիրքերը, նոյն
անձնապաշտութիւնը, նոյն աններօղամտութիւնը,
նոյն անիրաւութիւնը, նոյն սառն անտարբերու-
թիւնն առ ճշմարիտն, առ բարին և առ գեղեցիկն
պիտի տիրեն, եթէ պիտի շարունակենք միայն

խօսել, առանց ազնուարար և մարդավարի մտածելու և գործելու, եթէ մեզանում ամենայն գործ, ամենայն սուրբ գործ միայն անիրաւ մամոնայով պիտի ծախվի և զնվի, որեմն մեր այսքան ճիշն ու աղաղակը մայր աթոռի վերա արժանաւոր անձն ունենալու մասին նոյնպէս դուր խօսք պիտի համարվի:

Եթէ արդարև կամենում ենք, որ նորընտիր կաթողիկոսը փոքր ի շատէ վայելուչ և մարդավարի կերպով հոգայ և սնօրինէ մեր եկեղեցական և դպրոցական գործերը, պիտի աշխատենք մեզ ազատել անձնական կիրքերի և մանաւանդ անիրաւ արծաթսիրութեան բռուն տիրապետութեանց, և լուսամտարար մտածող իւրաքանչիւր Հայն, Աւետարանի խօսքին համաձայն, վերստին ծնվելով, ուխտ պիտի կապէ ազնուարար մտածելու, ազնուարար ներգործելու, և իւրաքանչիւրն իւր ստանձնած պաշտօնում ազնուաբար և բարեխղճաբար անդադար աշխատելու:

Սա է ճշմարիտ ճշմարտութիւնը...

Պիտի ազնուաբար աշխատենք:

Օրհնված աշխատութիւն... բացազանչումէ՛ անդլիացի բանաստեղծ Քանիէլը, — եթէ դու էիր Աստուծու անէծքը, հապա ինչ պիտի լինի նորա օրհնութիւնը...

Մանկավարժանոցը սակաւաթերթ է, բաժանորդների պակասութեան պատճառով: Թող յոսօանք, որ դպրոցների վարչութիւնները, որոնց ուղարկվում է ամօսագիրք, տեսնելով Մանկավարժանոցի օգտաւէ-

տութիւնը, կվճարեն տարեկան գինը (3 ման.),
խմբագրութիւնս ծախսից թեթեացնելու Իսկ
եթէ հայագն մտածող և սարտաճանաչ ուսուցիչ-
ները կցանկան, որ Մանկավարժանոցն ընդարձակվի,
թող յօժարեն նպաստել իրանց աշխատակցու-
թեամբ և մանաւանդ բաժանորդագրութեամբ:
Ապա թէ ոչ, ծանր պարտքեր չբառնալու և հրա-
տարակութիւնը չդադարեցնելու համար, ստիպված
կլինինք շատ չափաւորութեամբ կատարել մեր
պարտքն առ հայկական դպրոցը:

Խմբագրութիւնս դիտմամբ ուշացրեց Մանկավար-
ժանոցի հրատարակութիւնը մինչև մարտ ամիս,
սպասելով բաժանորդներին: Այսպէս վարվեցանք
առաւելապէս, որովհետև յունվարի և փետրվարի
տետրներն փոխարէն Մանկավարժանոցի բոլոր բա-
ժանորդներին ուղարկեցինք սրօգբամների գրք-
քոյկը, որը վեց թերթից է բաղկացած և, իբրև
համակեդրօնական և համակարգ դպրոցական
սրօգբամների և հրահանգների առաջին փորձ,
հայկական մանկավարժական գրականութեան
մէջ, կարող է օգտաւէտ և կարևոր լինել մեր ու-
սուցիչներին և դպրոցներին: Թէև ընդհանրապէս
ուսուցիչները, շատ անտարբեր լինելով դէպև ման-
կավարժական պարբերաթերթերը, նոյն անտար-
բեթիւն ցոյց տուին և առ Մանկավարժանոցը, բացի
շատ սակաւաթիւ անձերից, որոնց սոգգանունները
կհրատարակենք:

Գարոցում աշակերտներին ոչ միայն կանոնաբար և ուղիղ մտածել և ազնուարար և շարունակ աշխատել սովորեցնելու է, այլև նոյն չափով արքամարանօրէն և իմաստնարար գրել սովորեցնելու է: Եվրօսպալում նոյնիսկ տարրական դպրոցում, ստորին դասարաններից արդէն սկսում են աշակերտներին շարադրութեամբ վարժեցնել: Այս վարժութիւններն ապագայ հեղինակութիւնների հիմն են լինում: Այս մեծ խնդրին կարևոր ուշք դարձնել հրաւիրումեմ մեր ուսուցիչներին:

Մանկավարժանոցը շարադրութեան նիւթեր կառաջարկէ, խնդրելով ուսուցիչներէց, եթէ կարելի է, գրել առ իրանց աշակերտներին և ուղարկել խմբագրութեանս: Լաւագոյն գրութիւնները Մանկավարժանոցն բնօրէր պատկերներով կը վարձատրէ: Ամեն անգամ շարագրօղը պիտի նշանակէ իւր ուսման տեղն ու հասակը: Այս անգամ դպրոցների աշակերտներին առաջարկում եմք հետևեալ բնարանները. 1) «Իմ ընկերներ», որի բովանդակութիւնը պիտի լինի. ձեր ընկերների մէջ ինչ յատկութիւն նախապատիւ էք համարում, և այդ նախապատուութեան օտիթներ ինչ են:

2) «Նամակ հօրը»: Բովանդակութիւն. Ձեր հայրը քանի մի եօթնեակից ի վեր բացակայ է իւր գործերի համար: Գրում էք նորան բոլոր բնտանիքի մասին տեղեկութիւններ տալու: Նկարագրումէք նորան թէ սրբան զգալի է նորա արկասութիւնը տանը: Խնդրումէք շտապել վերադառնալ ձեզ ուրախացնելու:

Միջնակարգ դպրոցների աշակերտների համար:

Պատանիներին — մեկնեցէք թէ ինչ օգուտներ է քաղում մի երկիր ճանապարհներեց, խճուղիներեց, շոգեհաններեց, ջրանցքներեց, երկաթուղիներեց, մի խօսքով հաղորդակցութեան միջոցներեց:

Օրիորդներին — փոքր աղջիկ տեսնումէ իւր մօրը ճերմակեղէն կարկատելիս: Նոր ճերմակեղէն գնելըն իւր կարծիքով առաւել լաւ կլինէր: Մօր պատասխանը: Կարկատելու օգտաւէտութիւն: Կարգի և տնտեսութեան սովորութիւն և սորանից առաջացած բարօրութիւն և բուսականութիւն տրւնալարութեան մէջ: Ով այս նիւթերից մին լաւ կ'մշակէ, սրտգեւ կտտանայ Զվիցէրայում տալիս հիանալի պատկեր Յիսուսի գնալը ծովի վերայ և Պետրոսին ազատելը (Մատթ. Ժգ. 23—34):

Մրցումն և բարի նախանձ կամ նմանելու յօժարութիւն զարթեցնելը շատ գործերում շատ օգտաւէտ է: Ուստի խնդրումենք դպրոցների վարչութիւններից հաղորդել մեզ հրատարակելու այն ամենայն ազնուութեան, անընչասիրութեան, ընկերսիրութեան, վեհանձնութեան, արիութեան փաստերը, որոնք կնկատվին աշակերտներին մէջ:

Մանուկներին կրթութեամբ պքաղող անձներն գիտեն թէ որքան խնդիրներ, տարակուսանքներ, կասկածներ, եզրակացութիւններ առաջ են գալիս, որոնք գուցէ անձիւր և շտապօղակի են, բայց և այնպէս մեծ նշանակութիւն ունին, որովհետև

նոցա թելադրողը գործնական կեանքն է, փորձն է, և ոչ թէ միայն տեսական դատողութիւն: Այսպիսի պատահական նկատմունքը մեծագոյն մասամբ, կամ աւելի ճիշտն ասեմ, ամբողջութեամբ կորչումեն ընդհանուր օգտի համար:

Նկատողը գուցէ հաղորդէ իւր ընկերի մասնաւոր խօսակցութեան մէջ, և այնուհետև ինքն ևս մոռանալ: Մինչդեռ այսպիսի նկատմունքը շատ անգամ հրատարակելով, կարող էին որևիցէ գործնական հետեանքին հասցնել: Մանկավարժանոյն առաջարկումէ դաստիարակներին և դաստիարակչուհիներին *հանկարծաբար նկատուան* անունով համառօտ գրվածներէ համար իւր քանի մի երեսներ, որն իբրև իրանց սեփական լիշատական համարելով, կարող են ղետեղել կրթութեան վերաբերեալ ամենայն հետաքրքիր նկատումն: Ընթերցողները կկարգան, գուցէ և կպատասխանեն: Դաստիարակութեան գործը կենդանի գործ պիտի լինի, մօտեցնելով միմեանց լրջօրէն նոյն գործով զբաղող անձներին, եթէ մինչև անգամ անձամբ անձանօթ են միմեանց հետ: Թող յուսանք, որ հայ ուսուցիչները և ուսուցչուհիները կաջակցեն օգտաւէտ գործին: Երբեմն ոմանք ծուլանումեն գլուխն եկած միտքը գրել, ոմանք չեն կարողանում գրելու սովորութիւն չունենալով, ոմանք չեն համարձակվում հրատարակելու ուղարկել: Կրկնում ենք. հայրական դպրոցները բարեկարգելու և հայագն մանուկներէ մարդավարի դաստիարակութեան խնդիրը, հայութեան բարոյական փրկութեան խնդիր է: Եւ այս փրկութիւնը

Հայրագն զաստիարտիկներն կամ վարժուհիներն ձեռին է։ Այլև մոռանալու չէ, որ կրթութեան գործը շատ մանրակրկիտ գործ է, և մանր խնդիրներն իր յոր դասնալու մեծ խնդիր է առաջանում և կատարվում։ Գործին այսպէս նայելով, ոչ ոք պետի գլանայ աշխատելուց, որքան աննշան ևս երևէր իւր աչքին առաջնիկայ գործը։ Առանց դժուարանալու, առանց ամենայն ձեւապահութեան, Յ կօւլէկ արժօղ բաց նամակով, Համառօտ խօսքով, մատիտով զրած անգամ ուղարկելու է մանկավարժական նկատմունքը Մանկավարժանոցին։

Ամերիկայի գանազան դպրոցներում կանոնաւոր շրջելու դասերը նոյնպէս աւանդվում են, ինչպէս երգեցողութիւն, խաղ, լեզուներ և այլն։ Առողջապահութիւնը պահանջում է շրջելիս աւելի մատներին ոյժ տալ, հակառակ դէպքում իւրաքանչիւր քայլափոխին ողնաշարի սաստիկ ցնցումն է լինում։ Առողջապահական կանոններին աւելի համեմատ և յաջող շրջում են Փրանսացիներն և անգլիացիները։ Իսկ գերմանացիներն ամենքից վատ և անյաջող են շրջում, որովհետև մանուկներն շրջելու եղանակին Գերմանիայում սակաւ են ուշք դարձնում։ Հարկաւոր է սովորել շրջելն ևս։

Մանկավարժանոցը յօժարութեամբ կհիւրընկալէ միայն դպրոցական խնդիրներին վերաբերված թղթակցութիւնը։

Խմբագրութեանս Հարց կամ խնդիր առաջարկողներին այս առաջին անգամ մասնաւոր նամակներով՝ պատասխանեցինք: Այսուհետեւ, ժամերը տնտեսելով, ամենայն Հարց ու խնդիր առաջարկողին խմբագրութեան պատասխաններում կապտասխանենք: Անյայտ մնալ կամեցողները կարօղ են իրանց թէ քաղաքը և թէ ազգանունը պայմանական բառերով, նշաններով կամ տառերով նշանակել, կամ ուրիշ մի քաղաք նշանակել, և միայն իրան յայտնի Հասցէով կարգաւ խմբագրութեանս պատասխանը:

Ոմանք բարեկամներ բազմիցս առաջարկած են Խորէն վ. Ստեփանէին Հրատարակել Ս. Մեսրոպի իբրև մանկավարժի մասին կարգացած ճառք Թիֆլիսի Հնագիտական Ժողովում: Մինչև այժմ անհնարին եղաւ այս ցանկութիւնը կատարել, ճառը մեծ. պ. Երեցեանի ձեռին մնալու պատճառով: Հ. Խորէնը դիմել է նամակով և ծանօթներէ միջնորդութեամբ, բայց երևի պարոնին չէ Հասել մինչև այժմ այս խնդիրը, ուստի այժմ նորից խնդրում է Հ. Խորէնը պ. Երեցեանից վերադարձնել այն ճառը, որ ստացաւ նա նոյն ինքն ժողովում կարգաւրոց լեհոյ:

Խմբագրող-Հրատարակող ԽՈՐԷՆ Ծ. ՎԱՐԳ. ՍՏԵՓԱՆԷ:

Մ Ա Ն Ո Ւ Յ Մ Ո Ւ Ն Ք

Վարժարանի Խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել Հայ Հասարակութեանը, որ ներկայ փետրվար ամսից կը շարունակուի Վարժարան ամսագրի Հրատարակութիւնը, և լոյս կը տեսնի նորա № 3 նոյն ուղղութեամբ և ղերքով և նոյն աշխատակիցներէն օգնութեամբ. ուստի Հրաւիրում է ցանկացողներին բաժանորդ գրուելու ղերմել Թիֆլիս Խմբագրութեան Քարտուղար պ. Պ. Նահբուզադեանին հետեւալ հասցէով. Въ Тифлисъ, въ Редакцію журнала Варжаранъ, Аббасъ-Абастская площадь, домъ № 8, Секретарю Редакціи Григорію Шахбудагану, կամ—Въ Тифлисъ, деполамиъ Цатурова. Տաճկաստանումը ստորագրութիւնը ընդունվում է Բուրաստան Մանկանց Թերթի Խմբագրատանը, Կ. Պոլիս:

Տարեկան գինն է 4րոսք ուրբլի կանխով:

Ծանօթութիւն. Վարժարանի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և յունվար ամիսներէ լոյս չտեսած Համարներն փոխարէն Խմբագրութիւնը խոստանում է սալ իւր բաժանորդներին կամ մի ընթերցանութեան ծոր գիրք, կամ նոյն ամիսներէ չափին Համապատասխան մի Համար յունիս ամսին:

Խմբագիր-Հրատարակիչ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ:

Մանկավարժանոց ամսագիրը հրատարակվում է 1884 թ. յունվար ամսից, գլխավորապես մանկավարժական ուղղութեամբ: Ամսական տետրն երկու թիւրթիւց է, տարին կրկին 10 տետր (յուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվի):

Մանկավարժանոցի տարեկան դիմն է 3 մանէլ:

Հրատարակում են մտածող, դարձյանուէր հայպի ուսուցիչներն աջակցելու Մանկավարժանոցին իրանց բաժանորդադրութեամբ և աշխատակցութեամբ: Ատորագրւողները յատկապէս սկսի գրին աշխատեցէ՛ով. Св. Эчмядзинь. Редакции Маннаваржаноцъ.

Խմբագրող-հրատարակող ԽՈՒՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ:

Համակեղրօնական Պրօգրամներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների հասհանգներով հայկական հոգևոր ծիսական և մեղնակարգ դպրոցների համար վաճառվում են Թիֆլիսում Կեղրօնական գրալաճառանոցում (Центральный Книжный магазинъ) և Զաք. Գրիգորեանի Կովկասեան Գրալաճառանոցում (Кавказская Книжная торговля З. Грикурова): Գրքօրի գինն է 50 կ.: Մանկավարժանոցի բաժանորդները ստանում են պրօգրամների գրքօրին ամսագրի յունվարի և փետրվարի տետրների փոխարէն: